

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՄԱՆՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԻՐԱՐԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1878 ԱՄԻՆ

ՀԻՍՏ ԺԵ.

19 ՅՈՒՆՎԱՐ 1879



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐԸԵԱՆ

1879

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Ստեփան Ժաշա Ասրանեան	Ա. Ասենապետ
Տեղապետ Էֆենտի Կուստիքեան	Բ. »
Յովհաննէս Էֆենտի Կուստեան	Գ. »
Մկրտիչ Էֆենտի Մելիքեան	Ա. Ասենապետ
Ատոմ Էֆենտի Տէրոյենց	Բ. »
	Գ. »

ՉԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Մատթէոս Կոնստանտին Կոնստանտին	Ասենապետ
Ներսէս Կարապետ Ասրանեան	
Սեփակեմ Էֆենտի Մանուկեան	

ԴԱՍՏԱՐԱՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Խորեն Արքեպիսկոպոս Կորսիկ	Ասենապետ
Գէորգ Էֆենտի Ապտուլա	
Գէորգ Էֆենտի Սթիմարանեան	

ԿԱՆՈՒՄՈՅ ԴԻԻԱՆ

Յովհաննէս Էֆենտի Կասեան	Ասենապետ
Մինաս Էֆենտի Գաբրիելեան	
Պօղոս Էֆենտի Ժամակոչեան	

ՅԱՐԱՐԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Կարապետ Էֆենտի Դաշարեան	Ասենապետ
Յարութիւն Էֆենտի Մելիքեան-Գալի	
Ստեփան Էֆենտի Փարապետեան	

ՀԱՄԱՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Աստուր Էֆենտի Աթան-Տիւրի	Ասենապետ
Մատթէոս Էֆենտի Ալիսանեան	
Յակոբ Էֆենտի Արշակ	

ԻՐԱՆԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Կարապետ Կոնստանտին Սերոյիքեան	Ասենապետ
Թադէոս Էֆենտի Պէկեան	
Սահակ Ապրո Էֆենտի	

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յովհաննէս Էֆենտի Պոյանեան	Ասենապետ
Մկրտիչ Էֆենտի Կասեան	
Տօթօր Փէշտիմանեան Էֆենտի	

ԽՄԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յարութիւն Էֆենտի Կորստանեան	Ասենապետ
Ատոմ Էֆենտի Տէրոյենց	
Դարբիշ Էֆենտի Գրստիքեան	

ՆԱԽԱԶ. — Տ. Մատթէոս Եպս. Իզմիրեան (առժամեայ կարգեալ)

ԱՏԵՆԱՊԵՏ. — Ստեփան Ժաշա Ասրանեան

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԿԵՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵԿԵՆՆԱԿԱՆՔ

1. Խորեն Արք. Կորսիկ Բ. 3
2. Կարապետ Եպս. Սերոյիքեան Բ. Պ
3. Մատթէոս „ Իզմիրեան
4. Ամբրոսիոս Վ. Ուրբինեանց Բ. Պ
5. Գարեգին „ Թաթարեան
6. Խորեն „ Կերոյեանց Բ. Պ
7. Հմայեակ „ Դիմարեան
8. Յովհաննէս „ Փարապետեան Բ.
9. Ներսէս „ Ասլանեան
10. Պօղոս „ Խօւտանեան
11. Արիստակէս Բ. Մամբրեան Բ.
12. Գէորգ „ Արժուեի Բ.
13. Գրիգոր „ Աճմեան Բ. 2
14. Խորեն „ Փէշտիմանեան Բ.
15. Յարութիւն „ Սերոյիքեան Բ.
16. Յովհաննէս „ Մկրեան
17. Սուքիաս „ Ստեփանեան
18. Սահակ „ Տ. Սարգսեան
- 19.
- 20.

ԱՆԻՄԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

Գումրախ, Կլարիկ Ժաշա
և Գումրախի դուռ

21. Գրիգոր Պէրպէրեան Բ. Պ
22. Գէորգ Ստիմարանեան

Բ. Բացակայութիւն առաջին :
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ :
Բ. Պ Բացակայ քանաւոր պատճառ :

23. Խորեն Արք. Կորսիկ Բ. Պ
24. Կարապետ Արք. Մամբրեան
25. Համբարձում Մարգարեան
26. Մինաս Գաբրիելեան
27. Յովհաննէս Պոյանեան
28. Ն. Մէլիքեան Տօթօր Բ. Պ
29. Պօղոս Պառնասեան
30. Սարգիս Արք. Կերեան
31. Սահակ Ապրո Բ. Պ
32. Սեփակեմ Մանուկեան Բ.
33. Փէշտիմանեան Տօթօր Բ.
34. Բարթող Բիւրքիպետեան Բ. Պ
35. Ատոմ Տէրոյենց
36. Գէորգ Ապրտիմանեան Բ.
- 37.

(Բ. Վիճակ)

Պէրպէրաշ

38. Արք. Կերեան Բ. 5
39. Ալիքան Խօրասանեան
40. Բարսեղ Հալանեան

Եկեղեցի

41. Զարեհ Քէրոյիք (Հրաթարեալ)
42. Մկրտիչ Բիւրքիպետեան Բ.
43. Պօղոս Ժամակոչեան (Հրաթարեալ)
44. Սեպուհ Մարգարեան Բ.

Խոսկիտար Ս. Խաչ

45. Թադէոս Պէկեան Բ. 5
46. Սիմեոն Ֆէլիքեան Բ.
47. Ստեփան Ասլանեան
- 48.

Խոսկիտար Ս. Կարապետ

49. Միշրան Պաշտօնաւորեան Բ.
50. Պօղոս Թորոգեան Բ.
51. Նիկողոս Ալանեան
52. Տրդատ Փարապետեան

(Գ. Վիճակ)

Բերա և

Դասը Ժաշա

53. Արք. Ունեան Բ.
54. Գրիգոր Սէլիմիեան
55. Մարտիրոս Յ. Տիւրեան Բ.
56. Միքայէլ Մամիկոնեան Բ. 2
57. Նշան Բազադեան Բ. 2
58. Ստեփան Խնդիրեան
59. Տեղեմար Մ. Էքսիմեան Բ. 2
60. Յարութիւն Նորատուեան Բ. 3
- 61.
- 62.

Միշրադ

63. Յակոբ Նորատուեան Բ.
64. Տիգրան Երսուֆեան
65. Պօղոս Երևոյեան
66. Մկրտիչ Նորիկեան
67. Մկրտիչ Գաղանեան

Պէրպէր և Դարպիս

68. Յ. Մէրեմ—Գուլի

(Դ. Վիճակ)

Հարգունեալ և Խնամիչ

69. Յովհաննէս Կասեան Բ.
70. Ստեփան Պէրպէրեան

71. Կարապետ Շահապետեան	
72. Մկրտիչ Մուրադեան	Բ
Նարդըզափու	
73. Յակոբ Էջմէշեան	
Ենիմահալէ Սամարիոյ	
74. Պօղոս Մկրտիչեան	Բ Պ
Թօփղափու	
75. Յովհաննէս Մարգարեան	
Էյուպ Ս. Եղիա և Ս.	
Աստուածաբան	
76. Գարեգին Յ. Մելիքեան	
Գուրուշլի	
77. Աստիա Իկիտպաշեան	
Հիսար և Պոյաճի ցիւղ	
78.	
Նոր ցիւղ և Սրէնիս	
79. Ղազար Հովուեան	
Պաշտ	
80. Մկրտիչ Գ. Էսեան	Բ Պ
81. Յովհաննէս Կրճիկեան	Բ
82.	
Քարակիւղիկ	
83. Յարութիւն Չլնճիւրեան	
84.	
(Ե. Վիճակ)	
Սամարիս	
85. Ալիքսան Պէշիւրեան	Բ 2
86. Աւետիս Քօլոլեան (Հրաժարեալ)	
87. Լեւոնապ Մելիքեան	Բ 3
88. Մինաս Ճաֆաճեան	Բ
89. Յակոբ Ամասեան	
90. Նազարէթ Շահապետեան	Բ
91. Յարութիւն Թիւլեան	
92. Յակոբ Առաք	Բ
93.	
94.	
Խապիւղ	
95. Առաքել Աւթու Տիւրքի	
96. Ութիկոս Պիլիկեան	Բ 3
97. Սարգիս Արաշաճեան	Բ
98.	
99.	
100.	

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	
Կարին	
101.	
Քէօրանիս	
102. Մ. Փափագեան Տօրթօր	
Անդրիանուպօլիս	
103. Ռուբէն Կիւմիւ շիւրաւան (Հրժ.)	
Նիկիոյիս	
104. Կարապետ Ս. Իսթիւնեան	
Ալի	
105. Պետրոս Միսաքեան	Բ 2
Ղարանիսար	
106.	
Արարկեր	
107. Կարապետ Խաչիկեան	
Բաղէշ	
108.	
Պրուս	
109. Քրիստոստոս Գազարոսեան	
Երդոկիս	
110.	
Անուսիս	
111. Համբարձում Աւանանեան	
Բալու	
112. Յովհաննէս Աղնապրեան	Բ 3
Էդեսիս	
113. Յակոբ Իսթիւնեան	
Մանչըրիս	
114.	
Հաճըն	
115.	
Երզնկա և Բարերդ	
116.	
Թէքիւրտաղ	
117. Տիգրան Գ. Սրնանեան	
Կիսարիս	
118. Գէորգ Գըլճեան	Բ
Խապիւղ	
119.	
Պալքաներ	
120.	

Մուշ	
121. Ստեփան Փափագեան	
Տիւրիկ	
122. Նշան Գարապաշեան	
Չլքուն և Մարաշ	
123.	
Տրապիզօն	
124. Տիգրան Տ. Ներսէսեան	
Պաշտառ	
125. Մելքոն Իսկէնտէրեան	Բ 5
Տիգրանակերտ	
126. Միւրան Չապանեան	
Վան	
127.	
Արարան	
128.	
Հալէպ և Այնթապ	
129.	
Սիւստանիս	
130. Մկրտիչ Յ. Մելիքեան	
Ռուսնուիս	
131.	
Կարս	
132. Արաշաճ Յ. Ալիաղեան	
Չնկաճաղ	
133. Համբարձում Սարճըշիւեան	
Ղարափիս	
134.	
Ատանա	
135.	
Սըղերդ	
136. Մատթէոս Ալիքսանեան	
Եօզղատ	
137. Լօղօթիթ Պալեօղեան	
Մալաթիս	
138. Գէորգ Վարդանեան	
Իզմիր	
139. Պապի Պապեան	
Եզիսպատ	
140.	

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Ազգ. Կեդր. Վարչութեան Հաշուեկշիւ 1879—80 տարւոյ
2. Ընտրութիւն Գ. Ատենադպրի

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ի բացակայութեան Ս. Պատրիարք Հօր, Իզմիրեան Տ. Մատթէոս Սրբազան յառ. ժամեայ նախագահութիւն կոչուելով, Ատենադ. բացուեցաւ ժամն 7 1/2 ին ի ներկայութեան 41 երեսփոխանայ, որոց վերջին թիւը յանգեցաւ 56 ի:

Նախընթաց նիստի ատենադրութեան ուշ ցրուած ըլլալուն և յԱտենի անդ ընթերցումն չուղուելուն պատճառաւ, դիտողութեան ենթարկումն ու վաւերացումը յաջորդ նիստին թողուեցաւ:

1.

Բացակայութիւնք

Անձնական տկարութեան պատճառաւ

բացակայութիւնն ծանուցանող յետագայ երեսփոխաններն՝

- Տ. Կարապետ եպս. Սերորեան
- Գրիգոր էֆ. Պէրպէրեան
- Պօղոս Սկրտիչեան
- Տօրթօր Մէջպուրեան էֆ.
- և Քիւրքճիպաշեան Բարթող էֆ.

օրինաւոր բացակայ նշանակուեցան ներկայութեան տուժարին մէջ:

2.

Հրաժարականք

Քօլոլեան Աւետիս և Ժամակոչեան Պօղոս էֆէնտիներն յերեսփոխանութենէ պար. զապէս հրաժարելու իմաստով նամակ գրած ըլլալով, Ատենապետ Փաշան զանոնք մի առ մի կարգաց և քուէարկութեան ենթարկեց:

Ժողովն ընդունեց սոյն անձանց հրաժարա-
կանները :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Մեր պատուար-
ժան ընկերներէն Դաւիթը Կարապետ էֆէն-
տի գիր մ'ուղղած է Ժողովիս որ մասնաւոր
ուշադրութեան արժանի է : Այլ յիշէ Ժողովս
որ երկու նիստ առաջ յաջորդաբար երկուս
և աւելի բացակայ գտնուող երեսփոխանաց հա-
մար կանոնին տրամադրութիւնը գործադրել
որոշուեցաւ . ուստի արտօնութիւն տրուեցաւ
Ս. Պատրիարք Հօր վերջին կոչնագիր մը ուղ-
ղել անոնց, իմաց տալու համար թէ՛ եթէ չա-
րունակեն իրենց բացակայութիւնը, հրաժարեալ
պիտի համարուին պարտազանց տիտղոսով և
միանգամայն Ժողովը յանդիմանութեան քը-
ւէին արժանացած պիտի նկատուին և անունին
պիտի հրատարակուի ի գիտութիւն ընտրողաց :

Պէտք չէ կարծել որ նոյն կոչնագրերն
ընդ կանոնական տրամադրութիւնն յիշելով կը
բաւականանային, այլ Սրբազան Նախագահին
կը յաւելուր նաև յորդոր կարգալ բացակայից
որ Ազգին գտնուած արդի փափուկ պարագա-
յից մէջ չը դրկեն զմեզ իրենց օժանդակութե-
նէն : Այս հրաւիրանաց վրայ բացակայներէն
ունենր հրաժարագիր դրկեցին, ուստի եկան
մեր գործոց մասնակցեցան և մէկ քանին իբր
պարտազանց հրաժար ընկալան Ժողովէս :

Այս տեսակ նամակ մ'ալ Դաւիթը էֆ. ի
դրկուեր էր, զի նա՛ տլ բացակայից դատա-
կից գտնուեր էր :

Տեսէ՛ք՝ ի՞նչ կը պատասխանէ Դաւիթը
էֆէնտի :

Եւ կարգաց հետեւեալը .

Ամենապատիւ Սրբազան Տէր,

Մեծաւ զարմացմամբ ընթերցայ
Ձեր Սրբազնութեան անցեալ դեկտ.
20 ին ինձ ուղղելու պատիւն ըրած նա-
մակն : Անտարակոյս սխալ տեղեկու-
թեանց խաբուած էք :

Ըստ օրինաց առանց բանաւոր պատ-
ճառի երեք անգամ բացակայ գտնուող
երեսփոխանը հրաժարեալ կհամարի .
բայց այն պայմանաւ որ հրաւիրագրոյն
իւր ձեռքը պատշաճ ժամանակի մէջ
հասած ըլլալը հաստատուի : Եթէ կա-
նոնագրութիւնն այսպէս կտրամադրէ՝
անյարմար կերպով հաղորդուած հրա-
ւիրանաց պատճառաւ Ազգային Ժողովոյ
նիստերուն մասնակցելու պատիւէն զրկ-
ուելուս համար գանգատելու իրաւուն-
քն իմա է . քանզի ժամանակէ մը ի վեր
հրաւիրագրերը շատ անգամ ընդհանուր
Ժողովոյ նիստերէն ետքը ձեռքս կհաս-
նին : Հետաքրքրալին այն է որ՝ Ձեր
Սրբազնութեան վերջին նամակն ևս,
թէև դեկտ. 20 ին գրեալ, 29 ին այս-
ինքն նիստին տեղի ունեցած օրը ինձի
տրուեցաւ : Ձեմ՝ գիտեր թէ այս վիճա-
կին ո՛վ պէտք է պատասխանատու սե-
պել . միայն սա կրնամ ըսել թէ ա-
ռանց եղելութեան ճշմարտութեանը
վրայ շոշափելի փաստեր ունենալու ե-
րեսփոխանի մը ծանր խօսքեր ուղղելն
ցաւալի սխալման մը արդիւնք է :

Ազգային պարտականութեանց կա-
տարման մէջ չերկրայիլը իմ ամենէն
հաստատ սկզբունքներէս մին է . ուստի
Ձեր Սրբազնութեան նամակին դառն
նշանակութեան առթիւ կսկիծ զգալս
բնական է :

Ընկալարուք իմ խորին յարգանա-
ցըս հաւաստիքը, որով մնամ

2 Յունի 1879

Սրբազան Տէր,

Գաղտնիք

Ձերումդ Սրբազնութեան

Ամենախոնարհ ծառայ

Գ. Կ. ՇԱՀՊԱՋ

Այլ տեսէ՛ք որ Դաւիթը էֆ. կը դժգոհի
կոչնագրին դառն ոճէն . որ թէև խիստ, վասն
զի կանոնին մէկ տրամադրութիւնը կը յայտ-
նէր, բայց քաղաքավարական էր կը կարծեմ .
սա ալ յայտնի էր որ Ժողովն այդ վերջնական
կոչնագրին որոշելով միտք չունէր ոչ զոք
վշտացնելու, այլ միայն կանոնի գործադ-
րութեամբ իր մեծամասնութեամբ գումարումն
ապահովելու հոգ տարած էր . ուստի Դաւ-
իթը էֆ. իրաւունք չունի դժկամակելու : Այ-
սու ամենայնիւ ըստ որում Դաւիթը էֆ. ան-
կանոն պարագայներ մէջ կը բերէ թղթատա-
րութեան մասին, և չըսէր որ կը հրաժարի,
դիւսնը կը կարծէ որ Ժողովիս պարտքն է
քննութիւն մը հրամայել և եթէ անկարգու-
թիւն կայ՝ բաժնու և շարունակել Դաւիթը
էֆ. ի հրաւիր դրկել Երեսփոխանական Ժողո-
վոյ գումարմանց :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Ենթադրենք
թէ հրաւիրագրերն ամեն անգամ որոշեալ
ժամանակին Դաւիթը էֆ. ի ձեռքը հասած չըլ-
լան, բայց Ժողովին գումարման օրը լրացայ
միջոցաւ ալ կը հրատարակուի : Այսին կանո-
նագրութիւննիս կարծեմ սպառած է, այս առ-
թիւ կառաջարկեմ որ նորէն տարագրուի և
մէյմէկ օրինակ տրուի՝ ամենուն, որ իրենց
պարտաւորութիւնը հասկնան :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Պարծերնիս շատ
ըլլալով, պէտք չէ որ ատենական խնդիրնե-
րով ընդ երկար գրողիմք : Քանի որ Դաւիթը
էֆ. չհրաժարի, Պիւսնին յանձնենք որ
պարտաւորուածը գործադրէ, և մեր ալ մեր
բուն գործերուն դառնանք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում եր-
կու կարծիք կը յայտնուի, մէկն է Դաւիթը
էֆէնտի չհրաժարեալ համարելով, . . .

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Ես հրաժար-
եալ համարուի չըսի . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն ձեր քը-
ւէին կը դիմեմ որոշելու համար թէ ի՞նչ պէտք
է ընել Դաւիթը էֆէնտի նկատմամբ :

Ձայս ըսելով Ատենապետ Փաշան քուէի
դրաւ Դաւիթը էֆ. ի հրաժարականի մասին
Պիւսնին կարծիքը զոր Ժողովը ընդունեց
միաձայնութեամբ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այսին կէտով
Ուրեմն և Ձայնէ Քերովրէ էֆէնտիներն ալ
մերժեք ևն իրենց դրկուած հրաւիրագրին . ա-
ստիք իբր պարտազանց հրաժարեալ պիտի
համարուին :

ՄԵՐԵՔԻՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Այսին կէտով
տան էֆէնտիին իմացած եմ որ ինք պատճա-
ռաբանեալ հրաժարական դրկած է արդէն,
սակոյն միշտ հրաւիրագիր կերթայ, և թէ այդ
պատճառաւ է որ չգար :

ԱՏԵՆԱՊԵՏ ՄԵԼԻՔԵԱՆ ԷՖ. — Սոյոգ
է որ Այսին կէտով տան էֆէնտի պատճառա-
բանեալ հրաժարական դրկած է արդէն . սա-
կայն հրաժարականը նախաբանութեան են-
թարկուած է և դեռ չէ՛ ընդունուած : Հե-
տեաւոր դիւսնը պարտաւոր էր կոչնագիր զըր-
կելը շարունակել մինչև յընդունելութիւնն ու-
րին հրաժարականի : Իմ գիտցածս այս է :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այսին կէտով
էֆէնտիի հրաժարականն իբր պատճառաբան-
եալ նախաբանութեան յուսեցաւ, և սակոյն
տակաւին ելք մը չունեցաւ . ըստ իս հրաժա-
րեալ չէ և առկա կը մնայ :

ՄԵՐԵՔԻՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ուրեմն Նա-
խաբանիչ դիւսնին պատասխանը փնտելու
պէտք կայ այդ մասին :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այսին կէտով
էֆէնտիի մասին գործը կը փոխուի . ըսել է թէ
նորա հրաժարականի խնդիրը տակաւին վճիռ
մ'առած չէ . ուստի և զայն պարտազանց հա-
մարելու իրաւունք չունինք :

Իսկ Ձայնէ էֆ. անանկ չէ. նա կը մերժէ
հրաւիրագրին առանց իսկ բանալու . մեզարը-
ւած տեղեկութիւնն այսպէս է :

ԱՏԵՆԱՊԵՏ ՄԵԼԻՔԵԱՆ ԷՖ. — Ընկա-
լագիրն անգամ չէ ստորագրած ու ետ դար-
ձուցած է :

ԵՌԻՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Այդ տեղեկութիւնը տուողին կողմէ ստորագրեալ գիր մը կա՞յ զիւանին քով:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ո՛չ, բայց թղթաւ տարը վստահութեան տրաման է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ կուզէք այդ ալ մնայ առկա, մինչեւ ստուգուի և պարզուի խնդիրը:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ո՛չ, ոչ. ըստ որում չորս անգամ իրարու վրայ բացակայ գտնուած է. ըստ կանոնի հրաժարեալ պէտք է համարուի:

ԵՌԻՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Զարեհ էֆ. ընկալադիրն անգամ չէ՞ ստորագրեր ըսուեցաւ. բայց միթէ ընկալադիրը նամակէն դուրս էր, եթէ անոր մէջ պարփակեալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ո՛չ, բայց էր ընկալադիրը:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Երեւոյի անկողնայ երբեակ բացակայութիւնն ընկալադիր առնելով կատուգուի, այնպէս չէ՞. ևս կարծեմ թէ այդ գիրը տանողին բերած տեղեկութեան վրայ ուրիշ բան պէտք չէ ընել, այլ ինչպէս Քրիստոստոսը էֆ. առաջարկեց, օրինաց տրամադրութիւնն ի գործ դնել և վերջացնել: Միշտ ասանցմով չզրոյցինք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում Զարեհ էֆ. այս չորրորդ անգամն է որ բացակայ կը գտնուի, և վերջին կոչնադիրն մերժելով և ո՛չ իսկ ուղեր է պատասխանել, ըստ կանոնի երբեակ բացակայութեամբ պարտադանց պէտք է համարուի և հրաժեշտ տրուի իրեն յերես, փոխանութենէ. այնպէս չէ՞:

Զայս ըսելով Ատենապետ փաշան քուէի դրաւ Զարեհ էֆէնտի իր պարտադանց հրաժարականը, զոր ժողովն ԸՆԴՈՒՆԵՑ միաձայնութեամբ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում Կիւմիւզկէտան էֆ. ալ բազում ժամանակէ հետէ

բացակայ կը գտնուի, եթէ կը հաճիք անոր ալ հրաժարման խնդիրը քուէի դնեմ և վերջացընենք:

ՁԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛, քուէի դրէք:

Ատենապետ փաշան քուէի դրաւ Կիւմիւզկէտան էֆէնտի հրաժարականն, զոր ժողովն ԸՆԴՈՒՆԵՑ միաձայնութեամբ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ահաւորիկ երկու տող գիր ալ Պէկեան էֆէնտիէն: Կը յիշէք որ ժողովն առջի նիստին մէջ որոշեց մերժել Պէկեան էֆէնտի բողոքական հրաժարականը և հրաւիրել զինքն՝ որ դայ իր երեսփոխանական պարտիքն և իրաւունքն եթէ ունի՝ ի գործ դնէ. իսկ եթէ չգայ՝ փոխուստ տուած նկատել, և երեսփոխանութեան անարժան հռչակելով հրաժարեցուցանել: Այս որոշումն իրեն հաղորդուեցաւ մասնաւոր գրով, ուր յիշուեցաւ նաև թէ անոր մանրամասն պարտադանքը ներփակեալ տեղեկութեան մէջ պիտի կարգայ: Բայց տեղեկութիւնը տը պարանկն ուշ ելնելուն պատճառաւ նամակին հետ ձեռքը չէ՞ հասած, ինչպէս որ դուք ալ այս առաւօտ կրցաք առնուլ: Ուստի Պէկեան էֆ. ընկալադիրն մէջ ստալէս պատասխաներ է. Եւ կարգաց հետեւեալը.

Առանց տեղեկութեան մէջ պարունակեալ Ազգ. ժողովոյ որոշումը ի ձեռին ունենալու միմիայն հրաւիրադիր մը ընդունած ըլլալու համար կատարադրեմ:

Թ. ՊԷԿ
1879 յունւար 18 հինգշաբթի
Ժամ 7 և 8 վայրկեան

Ի՞նչ պէտք է ընել ասոր:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Երէկ հինգշաբթի ժամը ճիշդ 7ին կոչնադիրը Պէկեան էֆէնտի ձեռքը հասած է. իսկ Ատենապետութիւնը ճիշդ ժամը 10ին զրկեցի, և ինք ըսեր է թէ սառ.

զիւ տեղեկութիւնն առի, բայց կարգաւ ժամանակ չունիմ. ուստի չեմ կրնար պատասխանել:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ այսպէս է, յառաջիկայ նիստին պէտք է ձգենք խնդրոյն տնօրինութիւնը, այնպէս չէ՞:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Սակայն տեղեկութիւնն առած ըլլալուն համար պէտք է ստորագրութիւն մը առնուլ իրմէ, որպէս զի յառաջիկայ նիստին ա՛լ ըսելիք մը չմնայ:

Ուրիշ դիտողութիւն ընող չըլլալուն Ատենապետ փաշան քուէի դրաւ Պէկեան էֆ. խնդիրն յառաջիկայ նիստին մնալու կէտն, զոր ժողովն ԸՆԴՈՒՆԵՑ միաձայնութեամբ:

Յ.

Նամակ Քաղ. ժողովոյ Ազգ. վարչութեան

Վարչութեան Քաղ. ժողովոյ յետագայ նամակը կարգացուեցաւ.

Վսեմափայլ Ատենապետ փաշա Ազգային ժողովոյ.

Քաղաքական ժողովոյս անդամներէն ոմանք հետզհետէ հրաժարական մատուցանելով, անոնց թիւը մինչեւ ցայսօր հինգի հասած է, որք են՝

Բարաղամեան Տիգրան	էֆէնտի
Ալիքսանեան Մատթէոս	»
Մանուկեան Սենեքերիմ	»
Հաղարեան Կարապետ	»
Սահակեան Յարութիւն	»

Ժողովս ըստ տրամադրութեան 40րդ յօդուածոյ Սահմանադրութեան հարկ կը համարի յայտադրել Ազգային ժողովոյդ, որպէս զի բարեհաճի պահսած

անդամոց տեղը լրացնելու համար պարտաւարտաճ անօրէնութիւնն ընել, առանց որոյ դժուարին պիտի լինի ժողովոյս մեծամասնութեամբ իր նիստերը շարունակել:

15 յունւ. 1879

Ի Դիմաց Քաղ. ժողովոյ

Վ. Ստեփանյան

Յ. 20 ՅԱՆՅԱՆ Գ. ՍՏԻՄԱՐԱՃԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սոյն նամակաւ Քաղ. ժողովոյ 5 անդամոց հրաժարած ըլլալը կը ծանուցուի. հրաժարագրերն ալ այստեղ են, հինգն ալ միօրինակ պարզ կերպով հրաժեշտ տուած են. կարծեմ հարկ չկայ հրաժարագրերը մի առ մի կարգաւ: Ուստի ամենը մէկէն քուէի կենթարկեմ:

Անմիջապէս քուէի դրուեցաւ հինգ հրաժարականն ի միտման, զոր ժողովն ԸՆԴՈՒՆԵՑ միաձայնութեամբ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը մնայ ուրեմն Ատենապետաց զիւանին յանձնարարել, որ ըստ օրինի հարկ եղածն ի գործ դնէ ընտրելեաց կրկնապատիկ ցուցակը պատրաստելու համար:

Զ.

Հրաժարագիր Ս. Պատրիարք Հօր

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ահա վերջին գիր մ'ալ, զոր սո՛վ վայրկեանիս ստացանք. կարգամ, ուշադրութիւն բրէք. կաղաչեմ:

Եւ կարգաց հետեւեալը.

Առ

Վսեմափայլ Ատենապետ փաշա և Ազգային երեսփոխանական Ընդհանուր ժողովն.

Ինչպէս որ յայտնի է Ձեզ՝ անձնական տկարութիւնս օր քան զօր ա.

ւերնալով անկարող վիճակի մէջ կը դըռնուիմ Պատրիարքական պաշտօնը արժանապէս վարելու, շարաթներով սեղանիս մէջ փակուած՝ որչափ որ հոգւով և սրտիւ կը տաքնապիմ այնչափ առաւել թէ մտաւոր և թէ մարմնաւոր կարողութիւններս սպառած վիճակի մէջ կը տեսնեմ. այս ատեններուս մէջ մանաւանդ մտօք և անձամբ կարող անձի գործ է այս պաշտօնը, իմ ձեռքէս որչափ կուգար այնչափը միայն գործելու ճիգն թափեցի: Ազգին կամքը յառաջ տանելու համար նոր գործիք պէտք է, ես հինցայ ու տկարացայ:

Կաղաչեմ որ այլ ևս խօսքի նիւթ չընելով այսօր ընդունիք հրաժարականս զոր քանիցս մատուցի Ձեզ, ինչպէս նաև Բ. Դրան այս երկրորդ անգամ գրաւորապէս: Ձեր վեհանձնութեանն ալ չը վայելեր մէկը բռնի պաշտօնի վրայ կեցունել: Բովանդակ աշխատութեանցս վարձատրութիւն և անկշռելի վարձատրութիւն պիտի համարիմ: Ձեր ընելիք այս շնորհը, այսինքն հրաժեշտս ընդունիլը:

Մնամ աղօթարար Ազգիս և Ձեզ

խոնարհ ծառայ

ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

1879 յունի, 19

Կ. Պոլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Օրէնքը կը տրամադրէ որ Պատրիարքի հրաժարական պատահած ատեն Ատենապետաց Ղիւանը գումարի և պէտք եղած նախաքննութիւնն ընէ անոր վրայ: Ուստի այս գիրն ալ կը յանձնենք Ատենապետաց Ղիւանին, ինչպէս Քաղաքական Ժողովոյ հրաժարեալ անդամոց համար որոշեցինք՝ առաջիկայ նիստին տեղեկագիր առնելու պայմանաւ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Հրաժարականն բուն երկուքը միեւնոյն բանն է. մէկն ընդունուեցաւ, այն է Քաղ. Ժողովոյ 3 անդամոց հրաժարականը, և ընտրութեան կէտը միայն որոշուեցաւ յղել Ատենապետաց Ղիւանին: Իսկ Ս. Պատրիարք Հօր հրաժարականի խնդիրը Ատենապետաց Ղիւանին տեղեկագրութեանէն ետքը կրնայ որոշուիլ:

ԵՈՒՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Ս. Պատրիարքն իր ներկայ հրաժարագրով անձնական տկարութիւնն իրր պատճառ մէջ կը բերէ: Սակայն մեզ համար հարկաւոր է Ազգին շահերն ալ նկատողութեան տանուլ այս պարագային մէջ. ուստի անհրաժեշտ պէտք է որ նախաքննութեան երթայ այս խնդիրը:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ուր կուզէ երթայ այս խնդիրն. եթէ մեր գիտցած մէկ բանը կայ, այս է որ Ս. Պատրիարքն Ազգին ցատեալն դարձանք չկարենալ տրուելուն համար կը հրաժարի: Ահա այս պատճառաւ էր որ նախորդ նիստին կուզէինք հասկնալ Վարչութեան թէ հարստահարութեանց խնդիրը՝ Ազգին մահու և կենաց խնդիրն ի՞նչ եղաւ: Ըստ իս պէտք է Պատրիարքական հրաժարման խնդրոյն վրայ այստեղ քիչ մը խօսուի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Խնդիրն անշուշտ Ատենապետաց Ղիւանին պէտք է երթայ նախաքննութեան, և անոր տեղեկագրութեանէն յետոյ Ժողովն անոր պատճառարանութիւնը նկատողութեան կառնու: Ուստի ես կառաջարկեմ

1. Մերթել Ս. Պատրիարք Հօր հրաժարականը:

2. Խնդրել Ն. Սրբազնութենէն որ բարեհաճի շարունակել իւր պաշտօնը մինչև ցնոր անօրէնութիւն:

3. Յղել նախաքննութեան այդ պատճառարանեալ հրաժարականը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում հաւաակ ղիտողութիւն ներկայող չկայ, Փա-

Ա.

Գաւառներն այցելուներ հանելու պէտքը վաղուց ճանչցուած և տակաւին անցեալ տարի ազգայնոց ոմանց ձեռնմտութեամբ ի գործ դրուած և այս այցելութեան օգուտը տեսնուած ըլլալով, կառավարկեմ Պիւտճէին ծախուց կողմը յաւելուլ գաւառական այցելուաց համար տարեկան 25,000 զրշ. և այս ծախքը դիմաւորելու համար կառավարկեմ անցագրատան հասոյթը, որ 25000 զրուշ ենթադրեալ է. և որ Հիւանդանոցի միայն յատկացեալ, կրկնապատկել, իւրաքանչիւր ճանապարհորդէ առնուած այժմեան տուրքը կրկնապատկելով: Այս տուրքը վճարողը ընդհանրապէս գաւառացիք են, արդիւնքն ալ դարձեալ իրենց պիտոյից համար պիտի գործածուի. ինչպէս ցարդ եղած հասոյթը Հիւանդանոցի համար կը գործածուէր, դարձեալ պիտի գործածուի եղած հասոյթին կէսը անդ խնամուելու գացող գաւառացի աղքատ եղբարց ծախուց իբրև օգնութիւն, և միւս կէսը ամեն տարի գաւառները զրկուելիք այցելուաց իբրև ծախք ճանապարհի:

Բ.

Գաւառաց մէջ կան այնպիսի վիճակներ, որ առաջնորդ պահելու անկարող են, ուստի և կը զրկուին հովուութենէ: Այսպիսեաց օգնել կեդր. սընտուկին պարտք ճանաչել կառավարկեմ, և այս տարուան համար իբրև ստիպողական կը նկատեմ 24000 զրշի ծախք մը յատկացնել Քիլի, Դերջանի, Սպերի և Քէմախի վիճակաց հովուութեան:

Վաղեան Լ. Բ. ի առաջարկութիւնը քուէի կը դրնեմ. ով որ կընդունի որ Ս. Պատրիարքի հրաժարականն սկզբաւր անընդունելի է և պէտք է խնդրել Ն. Սրբազնութենէն որ շնորհ ընէ իր պաշտօնը շարունակել մինչև ցնոր տընօրէնութիւն, և այս պայմանաւ կուզէ յանձնել խնդիրն Ատենապետաց Ղիւանին նախաքննութեանը, ձեռքը վեր վերցնել շնորհ ընել:

Ընդհանուր ձեռամբարձ հաւանութիւն ցոյց տրուեցաւ. իսկ հակադիրքին և ոչ մէկ ձեռք վեր ելաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըսել է որ Ժողովն անընդունելի կը վճռէ Ս. Պատրիարք Հօր հրաժարականը, և կը յղէ Ատենապետաց Ղիւանին, որ խնդրոյն նախաքննութիւնն ընելով հանդերձ խնդրէ Նորին Սրբազնութեանէն շարունակել իր պաշտօնը՝ մինչև ցնոր անօրէնութիւն:

ԱԼԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Այս որոշումը գրով Նորին Սրբազնութեան հաղորդել կառավարկեմ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Եւ անմիջապէս:

Շնտ աղէկ, շնտ ողէկ:

Յ.

Առաջարկութիւն Փախաղեան Լ. Բ. ի

Փախաղեան Լ. Բ. ի յետագոյ առաջարկութիւնը կարգապահեցաւ:

Վսեմապիայլ Ատենապետ

Ազգային Ժողովոյ

Պիւտճէին քննութեան և հաստատութեան պահուն արժան կը համարիմ հետեւեալ երկու առաջարկութիւնները ներկայացնել:

թեան համար, իւրաքանչիւրին 6000 ա-
կան զրուշ տարեկան սահմանելով:

Ազգային երեսփոխան
Ս. Գ. Պ. ՓԱՓԱՋԵԱՆ

19 յունվար 1879

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այսպիսի առա-
ջարկութիւնները բնականաբար նախաքննու-
թեան համար իրենց ձեռնհաս դիւանին կեր-
թան, կը յղենք զսա Համարակալութեան դի-
ւանին:

ՔԱՓԱՄԱՋԵԱՆ Մ. ԷՖ. — Կը ձայնակ-
ցիմ առաջարկութեան և կընդունիմ յղումը:

Օ Ր Ա. Կ Ա Ր Գ.

Ա.

Տնտեսագիր Համարակալութեան Գիւսանին
ի վերայ Հաշուեկշիւի
1879 — 80 տարւոյ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Անցեալ նիստին
Հաշուեկշիւոյն քննութեանն սկսելու վրայ էինք,
Ժողովը ցրուեցաւ. այսօր կազմեմ, քիչ մը
համբերող ըլլանք, աշխատինք և յառաջ տա-
նինք քննութիւննիս:

Արդէն Համարակալութեան դիւանը դի-
րացուցած է գործերնիս, յօդուածներու բաժ-
նելով:

Ահա տեղեկագիրը յօդուած առ յօդուած
կը կարգամ:

Ա. Յօդուածը որ փոխանակ 78-79 ի,
79-80 տարւոյ Պիւտճէն պատրաստել և քնն-
նել կառաջարկէր, կարգուէ ետեւ Ատենապետ
փաշան ի դիտողութիւն հրաւիրեց երեսփոխան:

ները, և տեսնելով որ խօսք ուղղող չկայ, բը-
ւէի դրաւ զայն, որ ամբողջապէս ԸՆԴՈՒՆՈՒՅՑ
ՑԱԻ Ժողովէն:

Բ. Յօդուածը կարգացուելով ի դիտողու-
թիւն հրաւիրուեցան երեսփոխանք:

ՊՅՑԱՋԵԱՆ Յ. ԷՖ. — Ս. Պատրիարքին
տարեկան թոշակը 60,000 դրշ. քիչ է, մանա-
ւանդ որ Խորհրդականին ամսականն ալ ինք
կը վճարէ, ասի պատիւ մը չէ մեղի, պէտք է
օրինաւոր ամսական մը որոշենք. ուրիշ բան
է եթէ նա չընդունի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Դրամական արդի-
վիճակին նայելով հինգ հազար դրշ. ամսականը
12 ոսկի ըսել է, որ ցաւալի բան է. թէև
տէրութիւնը 100 նոյ թղթադրամ մէկ ոսկույ
փոխարէն հանած ըլլալուն մեք 50 ոսկի ամ-
սական կուտանք ըսել է: Չենք կրնար դրա-
մական տարբերութեան նկատմամբ ասկէց ա-
ւելի բան մ'ընել, մանաւանդ որ Վարչու-
թիւնն ալ առաջարկած չէ և նոյն ինքն Սրբա-
զան Պատրիարքն ալ դիտողութիւն մ'ըրած
չունի: Ենթադրու է որ Նորին Սրբազնու-
թիւնը դո՛ւ կըլլայ այդչափով, ինք այնչափ
վեհանձնութիւն ցոյց կուտայ, որ մինչև ան-
գամ բարեխնայողականաց առատաձեռնութեամբ
մօտ օրերս իրեն նուիրուած 300 լիրայի գու-
մարն ալ մերժած և ետ դարձուցած է: Ասի
կատարեալ անձնութեան օրինակ մ'է:

ՄԷՐԵՏԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Պատրիարքա-
կան ամսականի խնդիրը ամենուն պէս իմ ալ
աչքիս զարկած է. ես ալ խօսելիքներ ունէի,
բայց չուզեցի խօսիլ. պատճառը բացատրեմ:
Եթէ Պատրիարքին ամսականն Ազգին պա-
տուոյն համաձայնեցնել ուզենք, Պիւտճէին
մէջ չսղմիր: Փափաղեան էֆ. դիտել տուաւ
թէ Նորին Սրբազնութիւնը տժգոհութիւն չու-
նի այս մասին, և անոր անձնութեան մէկ
նոր փորձը մէջ բերաւ. յիշաւ անհամեմատ
անձնութիւն մը, որ զԱզգն երախտա-
պարտ կընէ իրեն: Ուստի Պայման էֆէն:

տիի դիտողութեան իրաւունք տալով հանդերձ
կըսեմ թէ հնարը չենք գտներ, ի՞նչ ընենք:

ՊՅՑԱՋԵԱՆ Յ. ԷՖ. — Թող գիտցուի որ
չատ նուազ է Պատրիարքին ամսականը. պէտք
է աւելցունել. ուրիշ խնդիր է եթէ ինք
վեհանձնութիւն կընէ և չընդունիր. այն ժա-
մանակ նոյն ստակը Ազգին մէկ ուրիշ պի-
տոյքին կրնայ դորձածուիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կաղաչեմ, Պայա-
ճեան էֆէնտի, խնդիրը ստակ կայ և ի՞նչ պի-
տի ընենք ի վրայ չէ, այլ ստակ չըլլալուն հա-
մար Սրբազան Պատրիարքի արժանաւոր ամ-
սական չկրնալ սահմանելուն վրայ է: Հիմա
դուք ի՞նչ կառաջարկէք:

ՊՅՑԱՋԵԱՆ Յ. ԷՖ. — Պատրիարքական
ամսականին վրայ յաւելում մը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շատ աղէկ. ուրեմն
ինչպէս լսեցիք, երկու կարծիք կայ. նախ՝
Պայման էֆէնտի առաջարկած բարեփո-
խութիւնը քուէի կենթարկեմ, այն է Պատ-
րիարքական թոշակին յաւելում մ'ընել:

Զայս ըսելով Ատենապետ փաշան քուէի
դրաւ Պայման էֆէնտի բարեփոխութիւնն,
որ ՄԵՐԺՈՒՆՑԱԻ Ժողովէն: Եւ յետոյ տեղե-
կագրին Բ. յօդուածն այն է 60,000 դրշ տարե-
կան, ինչպէս որ է նոյնը քուէի դրաւ, որ ամ-
բողջապէս ԸՆԴՈՒՆՈՒՅՑԱԻ Ժողովէն:

Գ. յօդուածը որ պաշտօնէից տարեկան
183,000 դրշն ընդունել կառաջարկէր, կար-
գացուելով, երեսփոխանք ի դիտողութիւն հը-
րաւիրուեցան. սակայն դիտողութիւն ընող
չըլլալով քուէի դրուելէ ետեւ նոյնութեամբ
ԸՆԴՈՒՆՈՒՅՑԱԻ Ժողովէն:

Դ. յօդուածը կարգացուելէ ետեւ, նոյն-
պէս դիտողութիւն մը չըլլալով, քուէի դրուե-
ցաւ և պաշտօնէից թոշակին նոր յաւելման

1878 Մայիս 1 էն գործադրութեան առաջար-
կութիւնը ԸՆԴՈՒՆՈՒՅՑԱԻ Ժողովէն:

Ե. յօդուածը կարգացուելով դիտողու-
թեան ենթարկուեցաւ:

ՄԷՐԵՏԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Վարչութեան
առաջարկած նոր պաշտօնակալաց 4650 դրշ. ի
ամսականին համար Վարչութիւնը իր տեղեկա-
գրին մէջ կըսէ թէ արդէն 3000 դրշ. կվճարուի
երոստական լեզուաց դիւանագիրն. ըսել է որ
Համարակալութեան դիւանի դիտողութեան
տակ ինկած կէտերէն մին գործադրութեան մէջ
է արդէն. ասի նկատողութեան առնելու կէտ
մ'է, որու վրայ Վարչութիւնն ի հարկէ բա-
ցատրութիւն պիտի տայ:

Բայց չհասկըցայ՝ ի՞նչ ըսել կուզէ Հա-
մարակալութեան դիւանն՝ երբ կըսէ թէ այն-
պիսի նոր պաշտօն մը եթէ կայ, որում յար-
մար պաշտօնեայ չկայ դիւանատան մէջ, այդ
պաշտօնին յարմար անձը կրնայ նոր ընտրուիլ,
արդէն եղածներուն մէջ անյարմարին փոխա-
նակելով: Եթէ այդպիսի անյարմար անձինք
ունի դիւանատունը, և Վարչութիւնը չձանչ-
նար զանոնք, Համարակալութեան դիւանը
պէտք է ձանչցնէ. ես Համարակալութեան
դիւանի բացատրութիւնն այս մասին թերի կը
գտնեմ:

ԱԼԹՈՒՆ Ա. ԷՖ. — [Ատենապետի փաշ-
Ժողովոյ] Համարակալութեան դիւանը կը դի-
տէ թէ՛ դիւանատունն արդէն պարտական է
առաջարկուած քանի մը նոր պաշտօնեաներն
իր մէջ ունենալ, ինչպէս որ Սահմանադրու-
թիւնը կը տրամադրէ, կըսէ: Քաղ. Ժողովն
ալ նոյն իսկ Սահմանադրութեան հետեւելու
համար կառաջարկէ դնել զանոնք, վասն զի
պակաս են: Գալով երոստական լեզուաց հը-
մուտ քարտուղարի և թարգմանի, Սահմա-
նադրութիւնը նախատեսած չէ զայս. բոլորո-
վին նոր դէպք մ'է ժամանակիս պահանջումէն
ծնեալ: Ազգն այնպիսի սերտ յարաբերու-
թիւններ ունի այժմ օտար տէրութեանց դեմ,

սրանայ հետ, որ Վարչութիւնն անհրաժեշտ դատեց եւրոպական լեզուայ հմուտ քարտուղար մը բերել 3000 զրչ ամսականով. ուստի կառավարիւմ որ ընդունուի այս, ինչպէս նաեւ 4650 զրչը լրանալու համար մնացեալ 1650 զուրուշն ալ:

Իսկ գալով այն դիտողութեան թէ՛ դիւանատունն ունի իր մէջ այնպիսի անձինք, որ կարող են և միջոց ունին առաջարկեալ պաշտօնները վարել, այսպիսի բան մը չը տեսներ և չգիտեր Վարչութիւնը. եթէ ցուցուի, կը նայինք: Նոյնպէս կըսէ թէ որ և է պաշտօնի յարմար նոր անձ մը կրնայ ընտրուիլ արդէն եղածներուն մէջ անյարմարին փոխանակելով: Մեր գիտցածն ո՛րք է որ գըւանդածներն արդէն յարմար են իրենց պաշտօնին: Նորը պէտք է կըսենք՝ չէ թէ արդէն եղածներն անյարմար համարելով, այլ սակաւ գտնելով: Ուստի կառավարիւմ որ ընդունուի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այլ թուէ՛ք. կըսէ թէ Սահմանադրութիւնը նախատեսած է Գաղղիերէնի հմուտ քարտուղարի պաշտօնը. թեան մասը. բայց Սահմանադրութեան 14րդ յօդուածը կըսէ թէ դիւանապետը Հայերէնի քաջագիտութեամբ և Գաղղիերէնի վարժ անձ մը պիտի ըլլայ: Կը տեսնէք որ Սահմանադրութիւնը շատ կանուխէն նախատեսած է զայդ. վասն զի դիւանապետը պէտք է Գաղղիերէնի վարժ ըլլայ կըսէ. այս վարժ բառին մէջ տ. մեն բան կը պարունակի: Սակայն Վարչութիւնն այժմ ուրիշ բան մը կըսէ. այսինքն՝ չգիտէր թէ արդէն եղածներուն մէջ այդ նոր պաշտօններուն յարմար անձինք կան. և թէ ո՛րք են, որ բոլորովին անյարմար են, ու ա. նոնց տեղ նոր ընտրութիւն ընել պէտք է: Ուստի ես առանց խնդրոյն մանրամասնութեան մէջ մտնելու կառավարիւմ որ այդ յօդուածին համար Վարչութիւնն ու Համալսարանական դիւանը միանան և նորոգ քրն. նութեամբ համաձայնին: Եթէ Համաձայնին՝ նորէն խնդրը մեզ բերուի:

ՁԱՅՆԵՐ. — Շատ լաւ:

ԱԼԹՈՒՆ Ա. ԷՖ. — Փափաղեան է՛ք. ի պատասխանելով կըսեմ թէ վարժ և հմուտ բառերուն վրայ չէ խնդրը. մեր առաջարկածըն այնպիսի պաշտօնէութիւն մ'է, որ յարաբերութիւններ պիտի ունենայ դեսպանատանց հետ և երթեկեկութիւններ պիտի ընէ. տո՛ր դիւանապետին պաշտօնը չէ: Ահա կը տեսնէք որ ասիկա Սահմանադրութեան մէջ նախատեսուած չէ արդէն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես արդէն ըսի թէ մանրամասնութեան մէջ չպիտի մտնեմ այժմ. ուստի և ոչ իսկ Պատրիարքարանի պաշտօնէից կարողութեան առաջնանին խընդրոյն ալ կը մտնեմ այժմ. և խնդրի չյարուցանելու համար մինչև անդամ բերանս չափի և չըսի թէ Վարչութիւնը պարտական է պաշտօնէից մասին արդէն որոշեալ պիտ. ճէլին վրայ յարել և ոչ անկէ դուրս: Ա. մեն երկրի սովորութիւնն այս է: Բայց Վարչութիւնն կըսէ թէ արդէն նոր պաշտօնեայ մը աւելցուցեր է: Այդ մասին Ապրիլ 30 ին տարեկան հաշուեցոյցը բերէ նէ կրնամ խօսիլ. եթէ որոշեալ տարեկան գումարէն աւելի ծախք ըրած է, իմ դիտողութիւնս այն ատենին կը վերադառնամ: Հիմա այսչափ մը կըսեմ թէ Վարչութիւնն ինքնին չկրնար նոր ծախք մ'ընել. կը յիշէք որ թէ արդէն Վարչութիւնը և թէ իր նախորդն ամսաթուակայ ողջ դրամի վերածուելուն համար իրենք իրենց մէ բան չկրցին ընել. այլ խնդրը հոս բերել պարտաւորեցան և հոս որոշում տրուեցաւ: Եթէ այսպէս չըլլար, ի՞նչ հարկ ուրեմն որ Ազգային Ժողովն Պիտ. թուէրէ, երբ Վարչութիւնն ազատ ըլլայ անկէ չեղելու: Ուստի կրկին կառավարիւմ որ նոր պաշտօնէից մասը յղուի Վարչութեան և Համարակալութեան գիւանին:

ՊԱԼԵՕՋԵԱՆ Լ. ԷՖ. — [Սկզբում Քաղ. Ժողովոյ] Առաջարկեալ նոր ծախքն արդէն գործողութեանն սկսած ըլլալու մասին եղած դիտողութեան համար կը յայտարարեմ թէ

քաղաքական դէպքերն այնպիսի յարաբերութիւններ բերին՝ որ Պիտ. թուէին մէջ չունենալով հանդերձ չէինք կրնար այդ ծախքն անտես անցնիլ. ուստի Ս. Պատրիարքին յանձնարարութեան վրայ Վարչութիւնն ստիպուեցաւ այս մասին նոր ծախք մը բանալ առանց Պիտ. թուէին սպասելու: Ասի կը յայտարարենք մանաւանդ վստահ ըլլալով որ Ազգային Ժողովն ալ Վարչութեան առաջարկին կարեւորութեան գիտակցութիւնը պիտի ունենայ անշուշտ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կողաչեմ, այդ կէտն առայժմ խնդրէն դուրս է:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես այդ կէտին վրայ իմ դիտողութիւնս կը վերադառնամ ըսի, մինչև տարեկան հաշուեցոյցը ներկայանայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սահմանադրական վարչութեան մէջ պաշտօնէութիւնը միշտ ազատ է նոր ծախք բանալու. բաւական է որ վերջէն արդարացունէ անոր պէտքը. և եթէ ծախքը Պիտ. թուէի սահմանած գումարով չգոյցուի, փոխարինութեան յուշով մը հաշիւը գոյցուի:

ԱԼԻԲՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ճիշդ ես ալ այն պիտի ըսէի թէ Պալատական Էֆէնտիի հարկ չկար պատասխանելու, հերքէք է որ Վարչութիւնը գիտնայ թէ ծախուց համար որոշում մը տրուած է Ազգային Ժողովին. ուրիշ մասին ազատ է պէտք եղածն ընել և ժամանակին համարատու ըլլալ այս ժողովին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կողաչեմ ու շողորութիւն բրէք. Վարչութիւնը նոր պաշտօնակալի մը պէտք տեսեր, և կարգեր է. բայց չբացատրեր և ուզող ալ չկայ որ բացատրէ թէ ի՞նչ հաշուով այդ պաշտօնեայն բերեր է. անոր ամսականն պաշտօնակալութեան համար արդէն որոշած գումարէն պիտի ելնէ, թէ բոլորովին բացն է և վերջէն մասնաւոր վարկով մը պիտի գոյցուի: Հիմա Փափաղեան էֆէնտի կառավարիէ առաջարկ.

եալ նոր պաշտօնակալայ պէտքի խնդիրը դարձունել Վարչութեան որպէս զի Համալսարանական դիւանին հետ խորհրդակցութեամբ համաձայնին: Ուրիշ առաջարկութիւն ընող կա՞յ:

ՊՅՅԱՃԵԱՆ Յ. ԷՖ. — Ըսուեցաւ թէ Սահմանադրութիւնն արդէն նախատեսած է այս նոր պաշտօնէին պէտքը, «Գիւանապետը գաղղիերէնի ալ վարժ անձ մը պիտի ըլլայ» ըսելով: Պէտք է գիտնալ որ ըստ Սահմանադրութեան դիւանապետն իր դիւանին մէջ պիտի գործէ. իսկ այս նոր պաշտօնեայն՝ Վարչութեան յայտարարութեանը նայելով, տեսալ մը զարուքնախախտիւն ալ պիտի ընէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներկայէք. այդ կէտը խնդրէն դուրս է. խնդրին հիմա այն է որ Համարակալութեան դիւանը չուզէր նոր ամսականներու սահմանումն. Փափաղեան է. Գէնտի կառավարիէ յղել այս կէտը Վարչութեան և Համարակալութեան դիւանին՝ որ պէս զի իրարու հետ խօսելով համաձայնին. և խնդրին ապա բերուի մեզ՝ ի վաւերացումն. իսկ եթէ չկրնան համաձայնիլ, այն ատենն ալ իրր անհամաձայնութեան խնդիր կրկին բերուի Ժողովիս:

Ուրեմն նախ այս յղման առաջարկութիւնը քուէի կենթարկեմ:

Ձայս ըսելով ատենապետ փառն քուէի դրուա Փափաղեան Էֆէնտիի առաջարկած յղումը, զոր Ժողովն ԸՆԴՈՒՆԵՑ միաձայնութեամբ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն այս յօդուածն յետաձգեալ է. կանցնինք յաջորդ յօդուածին:

Ձ. յօդուածը կարդացուելով դիտողութեան ենթարկուեցաւ:

ԱԼԹՈՒՆ Ա. ԷՖ. — [Ստեղծարարի Քաղ. Ժողովոյ] Համարակալութեան դիւանին այս

դիտողութիւնը գրեթէ կմտենայ Քաղ. Ժ. ղովոյ առաջարկութեան. շատ հեռու չէ անկէ։ Փոխանակ նոր յաւելում ընդունելու, կընդունի նոր վարկ մը տալ Վարչութեան ներկայ 1878—79 տարւոյ մէջ պաշտօնէից խրաքանչիւրին կարօտութեան համեմատ առժամանակեայ յաւելումներ ընելու։ 1879—80 տարւոյ համար ալ Վարչութեան խոհեմութեան յանձնել կառավարիչ, նոյն վարկի խնդիրը բերելու եթէ դրամական վիճակին պատշաճութեամբ հարկ տեսնէ։ Այս տեսութեամբ կառավարիչ որ սոյն յօդուածն ընդունուի ինչպէս որ Վարչութիւնը կառավարիչ։ Բայց եթէ Ժողովը արամադիր չէ, Վարչութիւնը դժուարութիւն չցուցնէր համաձայնելու Համարակալութեան դիւանին՝ այս կէտին մէջ։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Փոքրիկ թիւրի մացութիւն մը կայ այս կէտին մէջ, զոր հարկ կը համարիմ բացատրել։ Համարակալութեան դիւանն յայտնի և բացորոշ կերպով՝ մերժել կառավարիչ Վարչութեան առաջարկութիւնը. Վարչութիւնը, կըսէ, փոխանակ ամսականի նոր յաւելման նոր վարկ մը թող խնդրէ ներկայ տարւոյ վերջին քանի մը ամսոց համար, և նոր վարկ մ'ալ եթէ հարկ ըլլայ, յառաջիկայ տարւոյ համար։

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այս ալ կերպով մը յետաձգուի ըսել է. բացատրեմ։ Համարակալութեան դիւանը կըսէ. Վարչութեան առաջարկած նոր յաւելումը չընդունուի Պիւտճէին մէջ. իսկ Վարչութեան ձեռքն ալ չուղէր կապել, ոյլ թղթադրամին անկման պատճառաւ պաշտօնէից ունեցած դժգոհութիւնն ի նկատի առնելով Վարչութիւնը՝ պէտք է կըսէ ներկայ տարւոյն մնացեալ չորս ամսուան միջոցին մէջ պէտք եղածին չափ գումարի մը համար վարկ խնդրէ. ըսել չէ այս որ այդ վարկին խնդիրը բերէ նէ անպատճառ պիտի ընդունուի. կրնայ ըլլալ որ չընդունուի։ Ահա այս է որ կըսէի թէ կերպով մը յետաձգել է այս խնդիրն, ազատ թողնելով Վարչութիւնն

որ պաշտօնէից բացէն օգնութիւններ ընելու, այս ինչին հինգ թուով, այն ինչին տասը թուով բաշխելու համար նոր վարկ մը առաջարկէ։ Այս կերպով կրնայ խնդիրը քուէարկուի։

ԱԼԹՈՒՆ Ա. ԷՖ. — Ըսել է թէ Համարակալութեան դիւանը սկզբունքով կընդունի որ պաշտօնէից բացէն օգնութիւն մ'ընել պէտք է, այս ալ յաւելում մը կենթադրուի, որոյ մասին համաձայն եմք ըսել է. տարբերութիւնն իմացն ալ է որ այս յաւելումը ներկայ տարւոյն վերջին չորս ամսոց համար զատ և յառաջիկայ տարւոյն համար զատ ըլլայ։ Կը մնայ չորս ամսուան համար յաւելումն՝ ըստ որում կարեորութիւնն արդէն չօջախուած է, կառավարիչ որ ծրագրին մէջ ցուցուած գումարէն և ամսուան բաժինն որոշուի և այն քուէարկուի։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Մասնաւոր գրով պէտք է ընել այդ առաջարկութիւնը, զի պիւտճէին ծրագրէն դուրս է։

ՊԱԼԵՕՋԵԱՆ Լ. ԷՖ. — Սրդէն գրով բերած ենք։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ձեր գրով բերածը պիւտճէին ծրագրին է. հիմա առաջարկածնիդ Համարակալութեան դիւանի բարեփոխութեան առաջին մասին հետեւողութեամբ նոր առաջարկութիւն մըն է, ասի պէտք է ստանձին գրով բերէք, և թերեւ մինչև այն ատեն թղթադրամին գինն ալ աւելի յնալով, առաջարկած ամսական 4000 դրչնիդ անբաւական պիտի ըլլայ ձեր դիտաւորութեան ծառայելու։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Վարչութիւնըն ամեն ատեն ազատ է երբ աւելի ծախք մը ընելու հարկին մէջ գտնուի, դիմել Ա. Ղազարի Ժողովոյ։ Այս նկատմամբ ինչ որ Համարակալութեան դիւանն առաջարկած է, ընդունինք ըմբոյ։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սահմանադրութեան չըջանին մէջ այս առաջին անգամն է որ Պիւտճէի

վիճարանութեան մէջ մանրամասնութեանց կը մտնենք. ասի մեր յառաջդիմութեան նշանն է. բայց այս տեսակ խնդրոց մէջ մեզի դաստու հանդիսացող մեծ ազդաց օրինակին պէտք է հետեւինք։ Պէտք է գիտնալ որ տահմանադրական Վարչութիւն մը ազատ է միշտ ծախուց մասին, իսկ ազատ չէ մուտքի մասին. չկրնար տուրք մը յաւելցնել առանց օրէնքի. իսկ որոշումէն աւելի ծախք մը կըրնայ տնօրինել պայմանաւ որ անոր պէտքն անպայման է և վերջին վարկ կամ փոխարինական քուէ առնելով հաշիւը գոցէ։

ԱԼԹՈՒՆ Ա. ԷՖ. — Բայց թղթադրամոց մասին Վարչութիւնը չկրնար ամեն անգամ հոս դիմել։

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Վարչութիւնն իր տեղեկագրին մէջ 48600 դրչի յաւելում մը կառավարիչ արժանաւոր պաշտօնեաները գոհ ընելու համար թէ որ իր նպատակն է պարգևատրել պաշտօնեաները, ոյս պարգևաբաշխութեան սկզբունքին դէմ եմ թէ պաշտօնէից պատուարժանութեան և թէ պիւտճէի դէմ ըլլալուն համար. իսկ թէ որ հատուտեալ ծախուց կարգք դնել կուզէ, այն ատեն գիտնալ հարկ կրլայ թէ ի՞նչ հիման վրայ չափած է. վասն զի Վարչութիւնը կըսէ թէ թղթադրամի տարապայման անկման փնտրոց փոխարինելու համար է. միւս կողմէ Համարակալութեան դիւանն ալ կըսէ թէ թղթադրամին օր ըստ օրէ փոփոխական վիճակին առջև կարելի չէ յառաջիկայ տարւոյն համար որ և է նոր յաւելում մ'ընդունի։ Թէ սոյն Ղիւանին և թէ Վարչութեան ըսած կերպովն ալ նկատուի, քանի որ թղթադրամի անկման պատճառը մէջ տեղ կեցած է, հիմն ի՞նչ պիտի ըլլայ, թղթադրամի ո՞ր գընոյն վրայ կուզէ չափել Վարչութիւնը և Համարակալութեան դիւանն ի՞նչպիսի չափ մը սահմանել կարելի կը դատէ. վաղն եթէ թղթադրամին գինը բարձրանայ, այն ատեն ի՞նչ հիման վրայ պիտի չափուի. կարծեմ թէ

Վարչութիւնն այս հարցմանց վրայ պարտաւոր է բացատրութիւններ տալ, որպէս զի կարեւոր լինի խնդիրը հիմնական կերպով լուծել։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խնդիրը դարձեալ ճապարկելու վրայ է. ամփոփենք։ Վարչութիւնը հարկ կը տեսնէ նոր յաւելում մ'ընել պաշտօնէից ամսականաց ինչ որ ներկայ տարւոյն համար արդէն ըրինք, թղթադրամոց տարապայման անկման պատճառաւ զայն բաւական չհամարելով նոր մ'ալ կառավարիչ առաջիկայ տարւոյ համար իսկ Համարակալութեան դիւանը կըսէ թէ առաջարկեալ 48600 դրչի յաւելումն եկող տարւոյն համար ըլլալով՝ այժմէն չընդունինք. զի չգիտենք՝ եկող տարի ի՞նչ պիտի ըլլայ դրամական վիճակին. թերեւ այնպիսի վիճակ մ'ունենանք՝ որ յաւելման պէտք չմնայ։ Միայն ներկայ տարւոյն մնացեալ չորս ամսոց համար եթէ Վարչութիւնը վարկ մը խնդրէ, առանձինն կը քուէարկենք զայն կըսէ ու ամբողջական յաւելումը կը մերժէ։

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Բայց եթէ Վարչութիւնը հաստատուն հիման մը վրայ առաջարկէ, պատճառ մը չունինք զրանալու։

ՊԱԼԵՕՋԵԱՆ Լ. ԷՖ. — Ձեր հասկընար, հաստատուն հիմ ըսելով Մէրեւմ-Ղուլի է. ֆէնտին ի՞նչ ըսել կուզէ։

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Բացատրեմ. երբ ոսկին 2 թղթի բարձրացաւ, ամսականաց համար չափ մը դրուեցաւ. 3 թղթի ելաւ նէ հարկերին 30 վրայ դրին ամսականները. բայց հիմա ոսկին 4 թղթի ելած է. ո՞ր գինէն անդին է Վարչութեան ըսածն, այն հատկընանք։

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ձգեցէր զայդ կաղաչեմ. ատոնց ամենը պիտի հասկընանք երբ նոր վարկ մը խնդրուի Վարչութեան կողմէն. հիմա պարզապէս Չ. յօդուածը քուէի կենթարկեմ. այսինքն՝ ըստ որում թղթադրամի գինը շարունակ փոփոխութեան մէջ է, Վարչ-

չաթիւներ վարկ մը պիտի խնայէ ներկայ տարւոյ վերջին 4 ամսոց համար, և վարկ մ'ալ եթէ պէտք տեսնէ, յառաջիկայ տարւոյն համար պիտի խնայէ, չիմերը ցուցնելով: Ըսել է խնդիրը պիտի յետաձգուի մինչև ի նոր խընդիր վարչութեան:

Ժողովն ԸՆԴՈՒՆԵՑ Համարակալութեան ղեկանին Զ. յօդուածն ամբողջութեամբ առանց հակառակ քուէի:

Ի. յօդուածը կարգացուելով ղիտողութեան ենթարկուեցաւ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Բ. Գրան սենեկապանի համար ամսական 150 զրչը ընդունիլ կառաջարկէ Համարակալութեան ղեկանը: Եւ այս ամսականին պէտք չեմ տեսնել. ինչ պէտք ունինք քարոքէհեամի համար յատուկ սենեկի, և ինչո՞ւ համար այս գումարը վըճարուի, մինչդեռ նոյն գումարով կրնանք բաժանայ չունեցող աղքատ գիւղի մը մէջ բաժանայ մը սահմանել:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Փորրիկ բացատրութիւն մ'ունիմ տալու այդ մասին: Եւ ալ պաշտօնակալ և մ'Ապարապետութեան դուռն, օրէն է որ իւրաքանչիւր պաշտօնակալի սենեակ կը յատկանայ իր պաշտօնատեղի. այն տեղ կուգան բարձրագոյն հրամանները, և սենեկապանին ամսականն ալ նոյն սենեկի պաշտօնակալը կը վճարեն: Բ. Գրան ալ ժամանակաւ մեր քարոքէհեամները կերթային հասր օվաթին կը պտըտէին. բայց վերջերը պէտք եղաւ յատուկ տեղ մ'ունենալ. սենեակ ուղուցաւ և տրուեցաւ քարոքէհեամներուն. շատ բաներու համար պէտք էր յատուկ սենեակ ունենալ. շատէն մէկը յիշեմ. օրինակի համար՝ կրօնախօսներ կը պատահին որ քարոքէհեամներուն սենեակը քահանայի կը յանձնուին յորդորանայ և համոզման համար ևս: Եւ որովհետեւ այս սենեակը յա-

տուկ սենեկապան ունի, որոյ ամսականը աւելն ազդի քարոքէհեամները կը վճարեն. կերևի որ մեր Ազգին ալ 150 զրչը բաժին ինչ կ'աւել, զոր շատ տարիներէ ի վեր կը վճարենք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ուրեմն քննուի, եթէ ուրիշ հրատարակողները կուտան, մենք ալ տանք. եւ շատ եմ որ ուրիշները չեն տար նոյն չափով:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըսել է փորրիկ բարեփոխութիւն մը կառաջարկէք. ուրեմն Փախաղեան էֆէնտի առաջարկած բարեփոխութեամբ քուէի կը դնեմ Ի. յօդուածը:

Զայս ըսելով Ատենապետ փաշան քուէի դրաւ Ի. յօդուածը, զոր Ժողովն ԸՆԴՈՒՆԵՑ հանդերձ քարեփոխութեամբ Փախաղեան էֆէնտի:

Համարակալութեան ղեկանի տեղեկագրին Թ. Ժ. և ԺԱ. յօդուածները կարգացուելով, ղիտողութիւն չըլլալուն համար մի առ մի քուէի դրուելէ ետեւ նոյնութեամբ ԸՆԴՈՒՆՈՒՅՑԱՆ Ժողովին:

ԺԲ. յօդուածը կարգացուելով:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ս. յօդուածն որ ղեկանական ծախուց կը պատկանի, ճշտոր ըլլալուն նախ՝ գրական պիտոյից մասն ղիտութեան, և եթէ ղիտողութիւն չկայ քուէարկութեան պիտի դնեմ:

ԱԼՔՈՒՆ Ա. ԷՖ. — [Ատենապետ Փաղ. Ժողովոյ] Համարակալութեան ղեկանը նախընթաց երեք տարիներու գրական պիտոյից ծախուց միջին համեմատութիւնը գտեր է, և ըստ այնմ զեղչ կառաջարկէ. սակայն քանի որ թղթադրամի անկման խնդիրը կայ, միջին

համեմատութիւնը զոնկը կարելի չէ. ուստի կառաջարկեմ որ վարչութեան առաջարկին ինչ սր է նոյնը պահուի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Համարակալութեան ղեկանը գրական պիտոյից մասը 12000 էն 8000 ի զեղչել կառաջարկէ. եւ մինչև անգամ կէսուակէս զեղչել պիտի առաջարկեմ: Այս ծախուց մէջ ալ ճիշտ պէտք չէ ըլլալ, խնայողութիւն ընել կը պահանջեմ. թղթադրամը նոր չեղաւ, անցեալ տարի ալ կար. և այժմեան առաջարկեալ ծախուց գումարին չափ ծախք չէ գացած: Համարակալութեան ղեկանն 8000 զրչ կառաջարկէ, առջի տարիներուն միջին համեմատութեան գումարէն 2000 զրչ ալ աւելի. Առանց մանրամասնութեան մտնելու կը խնդրենք որ կարելի եղածին չափ խնայողութիւն ընէ վարչութիւնն այս պարագային մէջ. եթէ ուղիւ, խիստ ազէկ խնայողութիւններ ընելու միջոցներ կան. օրինակի համար՝ հրաւիրողի կուգոյ հիմա մեղի կէս թերթով, ատանկ ալ պահարանը (անվրոյ) որ մեծ է, պղտիկ կրնայ ըլլալ ղիտողին ըլլալու համար. թէ որ պահարանին մեծութիւնը պատուոյ խնդիր մ'է. ինչո՞ւ տաճկերէնի համար գործածուած ահագին մեծութեամբ պահարաններ չեն գործածուիր երեսփոխանաց հրաւիրման համար: Այս պէտքերուն քով ուրիշ շատ պէտքեր ունինք նախելու. ուստի այսպիսեաց մտաին կարելի եղած խնայողութիւնն ընել պէտք է:

ԱԼՔՈՒՆ Ա. ԷՖ. — Փախաղեան էֆ. թող չկատարածի ընտ. որ վարչութիւնը խնայողաբար վարուած է և պիտի վարուի այս տեսակ պէտքերու մէջ որչափ ժամանակիս գրամական համեմատները ներեն. թերեւս մինչև տարեգումի գրական պիտոյից ծախքն առաջարկուած գումարէն շատ պակաս ըլլայ: Սակայն երբ խնայողութեան դասեր կը տըրուին մեզ և նախընթաց տարիներու միջին համեմատութեան հաշիւներ կը բերուին մեր առջև, պէտք է գիտնալ թէ մեր առաջարկած գումարը մեծ տարբերութիւն մը չունի

նախընթացներէն. անցեալ տարիներու թղթադրամի հաշիւն վրայ չափուած խորհուած և այնպէս առաջարկուած է: Ուստի կառաջարկեմ որ մերը նոյնութեամբ ընդունուի:

Ուրիշ ղիտողութիւն ընող չըլլալով, Ատենապետ փաշան քուէի դրաւ նախ Համարակալութեան ղեկանի առաջարկած բարեփոխութիւնը, և յետոյ վարչութեան առաջարկը, այն է 12000 զրչ. և այս վերջինն 7 քուէի զէմ 11 քուէով ԸՆԴՈՒՆՈՒՅՑԱՆ:

Այս քուէարկութեան միջոցին ձայն մը լսուելով՝ որ վարչութեան անգամոց քուէներն ալ ի համար կ'ունենին, Ատենապետ Փաշան պատասխանեց թէ վարչութեան անգամներէն անոնք որ երեսփոխան են, Համարատուութեան մասին քուէ չունին. իսկ Պիտոճէի մասին ունին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ Գ. ԷՖ. — [Ատենապետ Փաղ. Ժողովոյ] ղեկանական ծախուց վերաբերեալ յօդուածին 4 կէտերն ալ թղթադրամի անկման միևնոյն պատճառին ենթարկուած են. ինչպէս որ ա. կէտն վարչութեան առաջարկուածին պէս ընդունուեցաւ, մնացեալ 3 կէտերն ալ նոյնպէս ընդունուիլ կառաջարկեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Թղթադրամի և հեռագրի համար վարչութիւնը 14,000 զրչ կառաջարկէ. իսկ Համարակալութեան ղեկանը 10000 զրչ: վարչութիւնը միևնոյն թղթադրամի անկման պատճառը կը յիշեցնէ դարձեալ: Խօսք ուղղ կայ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — վարչութիւնը միշտ թղթադրամի անկման պատճառը մէջ կը բերէ. բայց մեր ազգային եկամուտներն ու ծախքերը բոլորն ալ թղթադրամ են. եթէ ծախուց մասին ուղղորդութիւն չընենք, շատ կը բանայ: Կաղաչեմ այս մանր մանր բաներուն համար վարչութիւնը ղիտողութիւն չընէ. եթէ մանր քննութիւններ ընելու փափարի, այս կարգի ծախքերը

կրնան շատ քիչնալ, և սասանի փոքր բանե-
րէն խնայողութեամբ մեծ գումար կը գոյանայ:
Այս պիւտճէն գալ տարւոյն համար է. տը-
ղէն տէրութիւնը թղթադրամի բարձման մա-
սին կարգադրութիւն մ'ընելու դատաւար է
կրնալ: Ուստի թղթադրամը պատճառ բըռ-
նելով այժմէն մեծ ծախուց դրնէր չրանանք.
ուրիշ շատ ու ամենակարեւոր ծախքեր ունինք,
անոնց համար ալ ստակ պատրաստենք:

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — Փափաղեան է-
ֆէնտիւնի առարկութիւններն որչափ ալ ի-
րաւացի են ծախուց խնայողութեան մասին,
այսու հանդերձ բան կայ որ չկրնար խնայո-
ղութեան ուսմանին մէջ կենալ. օրինակի հա-
մար՝ հեռագրոց վարձքը մէճիտի է. կըսէ
թէ միշտ թղթադրամի անկման պատճառը կը
քչենք. բնական է այս, ուրիշ կերպ չըլլար:
Կըսէ նաեւ թէ մեր հասոյթը թղթադրամ է,
այդ կերպով ծախքը շատ կը բանայ. բայց
վարչութեան բերած Պիւտճէն արդէն հաւա-
տարակշռուած է. ինչպէս հասոյթից կարգին
մէջ սխալ տեսնուի:

Գիտողութիւնը սպասելով Ստեփանակերտ
Փաշան քուէի դրաւ թղթատարի և հեռագրի
ծախուց մասին՝ նախ Համարակալութեան ղի-
ւանի բարեփոխութիւնը և յետոյ վարչու-
թեան առաջարկութիւնը:

Ժողովը 6 քուէի դէմ 19 քուէով Համա-
րակալութեան ղիւանին բարեփոխումն այն է
10000 զր. ԸՆԴՈՒՆԵՑ:

Կարգը՝ Լրագրաց բաժանորդագնոյն գա-
լով:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Նախ և առաջ ես
չեմ կարծեր որ Հայ լրագրաց խմբագիրները
բաժանորդագին պահանջեն Ազգ. Պատրիար-
քարանձն. ուստի այս մասին փոքրիկ խնայո-
ղութեան մը տեղի կայ:

ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՖ. — Այո՛, այո՛.
բաժանորդագին կընդունին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես չեմ կարծեր
ըսի, չի վայել չըսելու համար:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այս 6000 զր.ը,
զոր վարչութիւնը կառավարէ լրագրաց բա-
ժանորդագնոյն համար և զոր Համարակալու-
թեան ղիւանը 4000 ի գեղջել կըսէ, ըստ իս
պէտք է 16000 ըլլայ: Մինչև ցարդ ծախուց
մասին խնայողութեան կողմն էի. այժմ՝ այս
կէտին մէջ յաւելման կողմն եմ. Ազգին ղիւ-
քը փոխուած է. Եւրոպայի հետ մեծ յարա-
բերութիւն պէտք է ունենանք, եւրոպական
մեծ թերթերու հրատարակութիւնը պէտք է որ
Պատրիարքարանի մէջ գտնուին, ուշադրու-
թեան առնուին. ինչպէս Թայմիզի և ուրիշնե-
րու համար պէտք է. եթէ տեղական թեր-
թերու համար է առաջարկուած գումարը կը
բաւականանայ, եթէ ոչ օտար թերթերն ալ
մէկտեղ հաշուելով բիշ է:

ԱՏԻՄԱՐԱՋԵԱՆ Գ. ԷՖ. — [Ատենապետ
Քաղ. Ժողովոյ] Մայրաքաղաքիս թերթերուն
համար ըսուած է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Փափաղեան էֆ. ն
լրագրաց բաժանորդագնոյն համար վարչու-
թեանն առաջարկեալ 6000 զր.ի գումարը 16
հազարի վերածել կառավարիչէ, մինչդեռ Հա-
մարակալութեան ղիւանը 6000 էն 4000 ի
գեղջել կառավարիչէ: Նախ՝ Փափաղեան էֆ. ի
բարեփոխութիւնը քուէի կենթարկեմ:

Այնիջպէս քուէի դրուելով. 18 քուէ-
ով առանց հակառակ քուէի ԸՆԴՈՒՆՈՒՄԱԻ
Փափաղեան էֆէնտի 16000 զր.ի առաջար-
կը:

ԱԼՔՈՒՆ Ա. ԷՖ. — (Ատենապետի քաղ.
Ժողովոյ) վարչութիւնը կընդունի այդ 16000
զրու չը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այնչափ այս
մանաւ որ Եւրոպական լրագրաց կարեւորներն
առնուին ու կարգացուին, և հայկական լրագ-
րաց ստակ չտրուի. զի ասոնց խմբագիրները
որ մեծ մասամբ երեսփոխան են, չ'են ընդու-
նիր հարկաւ բաժանորդագին այնպիսի տեղէ մը

ուրիշ կը քաղեն մեծաւ մասամբ իրենց աղ-
գային լուրերը:

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Հայկական լը-
րագիրները բաժանորդագին կառնեն, բայց ի-
րենց պարտքն ալ կը վճարեն պաշտօնական
ծանուցումները ձրի հրատարակելով. եթէ
բաժանորդագին չալտի վճարուի, ուրեմն ծա-
խուցմանց համար պէտք է ստակ տրուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն քուէի որ
հայկական լրագրագետք չ'են հաճիր, մենք
ալ չ'ենք ընդունիր ձրի լրագիր առնել ՚ի
Պատրիարքարան: Կանցնինք այժմ Գիւա-
նական ծախուց 4դ կէտին, այն է Տպագրա-
կան ծախուց. վարչութիւնը 23000 զր. կա-
ռավարիչէ, իսկ Համարակալութեան ղիւանը
17000 ի իջեցնել կառավարիչէ:

ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՖ. — Սո՛ւ առեւնագ-
րութիւնն՝ որ վերջին նիստինն է և 8 ֆոր-
մայէ կը բաղկանայ, կարծեմ թէ 22—23 հա-
րկունց թղթէն պակաս չըլլար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — 20 մէճիտիէ գրեթէ:

ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՖ. — Կողաչեմ ա-
ղէկ նկատեցէք, ո՛ւր կերթայ ասոր ծայրը:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ահա այս տե-
նագրութեան համար կըսեմ. ի՞նչ պէտք էր
Պիւտճէի վերաբերեալ վարչութեան երկար
տեղեկագիրն ասոր մէջ նորէն տպել տալ,
քանի որ արդէն անոր տպագիր օրինակները
ծայերնիս են: Բայց վարչութիւնն ալ չեմ
մեղադրեր. թերեւս սովորութեան կը հետնի,
երբ առեւնագրութիւնը կազմուին, անոնց վե-
րաբերեալ բոլոր թղթերը մէջը գտնուելու
համար, սակայն կարելի էր միւսնոյն դիրքով
տպել և երկու անգամ տպագրութեան
ծախը չվճարել. ի՞նչ պէտք է եռապատիկ
ծախը ընել ասանկ խնայողութեան ժամա-
նակի մէջ, մինչդեռ մեր այս տեղ տախտակի
վրայ նստիլ յանձն առած ենք:

ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՖ. — Ստոր բացատ-

րութիւնը վարչութեան չիցնար տալ. պատ-
կառելի ղիւանը կրնայ տալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Գիւանը սրտոք
կը համարի յայտնել որ թէ և ստոյգ է որ
զրաէն եկած շատ մը զրեք տոկոսագրութեան
մէջ անցնելով կատարանայ տոկոսագրութիւ-
նը և հետեւաբար ծախսն կ'աւելնայ. սակայն
ղիւանն ամեն բան տոկոսագրութեան մէջ
անցնելու է խօսքն երեսփոխաններէն յաճախ
ըսած և ըստ այնմ վարուած է մինչև հիմա:
Պաշտով այս անգամի Պիւտճէի վերաբերեալ
կրկին տեղեկագրերուն թէ և ասոնք անգամ
մը տպուած էին երեսփոխանաց կանխաւ ցըր-
ուելու համար, բայց վասն զի աճապարանօք
ուրիշ տարւանի մէջ և տարբեր դիրքով տըս-
ուած էին և չէին կրնար այս տոկոսագրու-
թեան կցուիլ, որով զատ մնալով իր ֆէյշ
վօրանդ կրնային օր մը կորսուիլ և անհետա-
նալ, ուստի տրպուեցանք առեւնագրութեան
հետ կրկին տպագրել տալ:

Այն բացատրութիւնը տալէ ետեւ Ստե-
ֆանակերտ քուէի դրաւ Տպագրական ծա-
խուց կէտը Համարակալութեան ղիւանի ա-
ռաջարկած բարեփոխումէն սկսելով:

Ժողովը վորձով և հակափորձով, 10
քուէի դէմ 19 քուէով ԸՆԴՈՒՆԵՑ Համարա-
կալութեան ղիւանի առաջարկած 17000 զր.ը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն Ազգային
Ժողովը մեծամասնութեամբ կիջեցնէ տպագ-
րական ծախուց գումարը. ասի չափ մ'է որ
կը սահմանուի. ըսել չէ որ հազար կամ եր-
կու հազար զր. աւելի չըլլայ եթէ պէտք ըլ-
լայ. բաւական է որ վարչութիւնն ետքը
արդարացին իր ըրած ծախքը:

Ժ. Գ. յօդուածն. որ յարաբերութեան
ծախուց կը պատկանի, կարգացուելով, ըստ
որում ճշգրտոր և 3 մասէ կը բաղկանար, նա-
խապէս ա. մասը, այն որ Ս. Պատրիարք
Հօր երթեկութեան ծախուց կը պատկանի,
ղիտողութեան ենթարկուեցաւ:

Խաչերն արծաթ և ոսկեղօծ են, և տար-
ւոյն մէջ սարսափեցնող աւելի կը շինուին, որ
տարեգլխուն ալ պատրաստի գտնուի. միթէ
կուգէք որ տարեգլխին խաչ և տուփ չմնայ
Պատրիարքարանի մէջ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այո՛. չէք ու-
ղեր Ազգն առանց խաչի թողուլ:

[Թիֆաղք:]

ԵԱՀՊԱՋ Կ. ԷՖ. — Թղթաղարամը հիմ ըրու-
նելով ինչպէս կրնայ պիտանէ շինուիլ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Դա՛հաղ էֆէն-
տի գիտողութիւնը շատ իրաւացի է. բայց
մենք ամենա ալ այս երկրին մէջ կապրինք,
ճարտարապետ վիճակի մէջ դարձեալ մէկ յոյս
մ'ունինք թէ ամեն բան պիտի շարունակուի: Թէ
որ այսպէս շարունակէ, ոչ միայն դժուարու-
թիւնները պիտի շատանան, այլ և մեր խաչերն
ալ պիտի յաւելան:

Արդէն Համարակալութեան ղեկանը կը-
սէ թէ խաչն անարատն ոսկի և արծաթ ըլ-
լալու հարկ չկայ, և թէ նիւթը կրնայ վախ-
ուիլ. ըսել է որ նիւթին վրայ է խնդիրը:

Ուստի Համարակալութեան ղեկանին ա-
ռաջարկած 8000 դրն ընդունինք, Վարչու-
թեան յանձնելով որ շինուածքին ու նիւթին
մասին պէտք եղած կարգադրութիւնն ընէ:

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — (Անդամ Բողո-
քապետ) Վարչութիւնը պատրաստ է ընդու-
նիլ եթէ Ազգ. Ժողովն որոշէ որ նշանաւորու-
թեան խաչն արծաթ չըլլայ, այլ երկաթ կամ
ուրիշ ստորին մետաղ ըլլայ. հերիք է որ Ժո-
ղովն որոշէ:

ԵԱՀՊԱՋ Կ. ԷՖ. — Փափաղեան էֆէն-
տի գիտողութեան առաջին մասին պիտի պա-
տասխանեմ. թղթաղարամի հաշուով պիտանէ
չինել ինքզինքնին խաբել է. պիտանէ հաշիւ
մ'է, յայտ հաշիւի տակ չմաներ. հաշիւնիս
թղթաղարամ ալ լինի, ծախքը թղթաղարամի
հաշուով չկրնար ըլլալ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Դատ իրաւա-

յի է Դա՛հաղ էֆէնտի ըսածը. քանի որ
պիտանէ է շինածնիս, պէտք է մետաղի վրայ
ըլլայ, եթէ մետաղ չըլլայ ձայն չունի. սա-
կայն հիմակու հիմա չենք կրնար ընել. եթէ
ոսկին երթալով այսպէս բարձրանայ, դուցէ
Վարչութիւնը պիտի ըսէ թէ ձեր սահմանած
հաշուով չկրնիք երթալ: Այս պիտանէ դա-
լիք տարւոյն է. դեռ ևս բաւական ժամանակ
ունինք, կը յոսանք որ աղէկ կըլլայ. բայց
հակառակն ալ կըլլայ եղեր, այն չենք գիտեր:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խնդիրը վերջացը-
նելէ առաջ պէտք է գիտնանք որ քանի որ
այս տէրութեան մէջ կապրինք, և ահաւ-
թիւնը իր պիտանէն դուրս վրայ կը պատրաստէ,
մենք ալ նոյն շաղկին պիտի հետեւինք մանա-
ւանդ որ սնտուկին մուտքն թղթաղարամ է:
Այլ կը ըստ պիտանէն ենթադրական է, և տա-
րեգլխուն Վարչութիւնն իր հաշուեցոյցը տա-
լու տունն եթէ քիչ շատ տարբերութիւն տես-
նուի, հաշուեկշիւը կրնանք ձեռք բերել փո-
խարինական վարկ բուհարկելով:

Հիմա մեր ընելիքը, քանի որ բաւական
յառաջ դուրսն, պիտանէն լմնցնել է. Խակ
Դա՛հաղ էֆէնտին եթէ պնդէ իր առաջար-
կութեան վրայ, կրնայ դրով ներկայցել դոյն,
ինչպէս որ իր իրաւունքն է, և այն տունն կը
նայինք:

ԵԱՀՊԱՋԵԱՆ Կ. ԷՖ. — Ես Ժողովին ու-
ղողութիւնը հրաւիրել ուղեցի. եթէ դու-
րեմն ուղիղ վիճակի մէջ պիտի դրուին և պաշ-
տօնեայք պիտի ասորին, ասանկ թղթաղարամ
ամսականով կարելի չէ տնոնց ասորիլ, ինչպէս
որ փորձով գիտեմ. ոչ ալ այդ թղթաղարա-
մով որոշեալ ծախքերը կրնայ բաւական ըլլալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Դա՛հաղ էֆէն-
տի խօսքը իրաւացի է. ամեննիս գիտենք
փորձով. բայց ի՞նչ ընենք, պարտաւորեալ
ենք այսպէս վարուիլ: Հիմա դառնալով վի-
ճարանեալ յօդուածին, եթէ ուրիշ խօսք ու-
ղող չկայ, պարզապէս քուէի կենթարկեմ:

Զայս ըսելով Ատենապետ փաշան քուէի

դրաւ ընդհանուր ծախուց Երդ մասն ալ, Հա-
մարակալութեան ղեկանի առաջարկած բարե-
փոխումէն սկսելով:

Ժողովը փորձով և հակափորձով 8 քուէի
դէմ 11 քուէով ԸՆԴՈՒՆԵՑ Համարակալու-
թեան ղեկանի առաջարկութիւնը, խաչի,
տուփի ևն ծախքն 8000 դր զորոշելով և Վար-
չութեան թողով նիւթին և ձեւին կարգաւո-
րութիւնը պայմանաւ որ առաջարկութիւնն բե-
րէ Ժողովիս այս կէտին վրայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Պիտանէին ծախուց
մասը լմնցաւ. կը մնայ հաստիկի մասը, բայց
արդէն ժամը 10 է գրեթէ, չենք կրնար շա-
րունակել և յաջորդ նստին պիտի թողունք
որ դարձեալ 15 օրէն պիտի գումարուի: Մը-
նաց որ Ղեկանին երկու գիր յանձնուեցաւ
սա՛ վայրկեանին, մէկը Վարչութեանն՝ Երու-
սաղէմայ վանուց վերաբերեալ, և միւսն Ե-
րեսոյիսանական հարցում մը՝ Սրբազան պատ-
րիարք Հօր հրաժարականի վերաբերեալ: Եթէ
Ժողովը կը հաճի, առանց կարգաւորու այս եր-
կու գրերն ալ տառնագրութեան մէջ կանցը-
նենք, որպէս զի Երեսոյիսանք կարգան և իմաս-
տասիրեն զանանք մինչև առաջիկայ գումա-
րուն Ժողովը:

ԶԱՏԵՐ. — Հարցումը կարգացուի, ի՞նչ
ըլլան իմանանք այժմէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Դատ աղէկ:

Եւ կարգաց հետեւեալը.

ՀԱՐՑՈՒՄ

Ս. Պատրիարք Հօր առ Բ. Դուռն
մատուցած հրաժարագրին նկատմամբ
անցեալ նստին հարցում մ'ըրած էինք:

Եւ ըստ որում կը լսենք թէ Խա-
ռն ժողովոյ կողմանէ երէկ բարձրա-
պատիւ մեծ Եպարքոսին պատգամաւո-
րութիւն մը ներկայացրէ, ստորագրե-
ալ երեսփոխանքս կուզենք գիտնալ

թէ Խառն ժողովոյ պատգամաւորու-
թիւնն ի՞նչ արդիւնք ձեռք բերած է:

ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒՍԱՆԲ

Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Բ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Ս. ՓԱՓԱՋԵԱՆ Գ. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՆՇԱՆ ԳԱՐԱԳԱՇ

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Արդէն հրաժար-
ման խնդիրն Ատենապետաց ղեկանին յղուե-
ցաւ. այդ ալ կրնայ անոր հետ կցուիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Բայց այս հար-
ցումը տարբեր խնդիր է. ըստ որում հարցա-
նողը կը փափարին գիտնալ թէ երէկ Մեծ
Եպարքոսին ներկայացող Խառն ժողովոյ պատ-
գամաւորութիւնն ի՞նչ արդիւնք ունեցեր է,
կը հրաւիրեմ Տ. Մատթէոս սրբազանն որ նոյն
պատգամաւորութեան մէջն էր, յայտնել մեզ
թէ կրնայ անմիջապէս տեղեկութիւն տալ
Ժողովիս:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — [Խառն ժողովոյ
պատգամաւորներէն մին] Ո՛չ անմիջապէս. այլ
յառաջիկայ նիստին:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ժողովին ալ հար-
ցուցէք թէ կուզե՞լ տեղ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քանի որ պա-
տասխան չկայ, ի՞նչպէս կրնամ հարցունել
Ժողովին թէ կուզե՞լ տեղ, թիւրիմացութիւն
կայ այդ խօսքին մէջ:

ՄԵՐԵԷՄ-ԳՈՒԼԻՑ ԷՖ. — Խնդիրը կը
չփոխենք. հրաժարման խնդիրը Ատենապետաց
ղեկանին պիտի երթայ, ինչպէս արդէն սրու-
ուեցաւ, խնդրոյն մէկ մասն ալ երէկուան
պատգամաւորութիւնն է. հարկաւ Ատենա-
պետաց ղեկանը կը բանակցի նաեւ պատգա-
մաւորութեան հետ, կը տեղեկանայ և կը նշա-
նակէ արդիւնքն իր բերելիք տեղեկագրին մէջ:
Ինչո՞ւ դատ խնդիր ընենք, քանի որ պատգա-
մաւորութիւնն այսօր չկրնաւ պատասխանել
կը յայտնէ: Ըստ իս աւելորդ է հարցումը
դատ խնդիր ընել:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ատենապետաց

դիւանին յանձնուած գործը խառն ժողովոյ երկուսն աւտագամաւորութեան հետ յարաբերութիւն մը չունին, և թերեւս դիւանը չուզեր տեղեկութիւն մ'առնուլ այդ մասին:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. Վարչութեան ուղղեալ որ և է հարցում մը ներկայացուած ատեն, կըսէ Կանոնադրութիւնը, Վարչութիւնն իր կարծիքը տալէ ետեւ պէտք է որ ժողովն ալ որոշէ միթէ կամի՞ լսել հարցաւորը:

Հիմա քանի մը երեսօտիսաններէ հարցում մը ներկայացաւ. Վարչութեան անդամներն ըսին թէ յառաջիկայ նիստին կը պատասխանեն, ուրեմն կը մնայ ժողովին որոշել թէ կուզէ՞ լսել Վարչութեան պատասխանը. եթէ թիւրիմացութիւն մը կայ, շտկել պէտք է:

ԱՅՅԵԱՊԵՏ ՓԱՇԱ.—Հարցում և հարցաւորը տարբեր բաներ են, իրարու հետ չփոխելու չէ. մեր կանոնը որոյ գաղղիկերէնի բնադիրն ունիմ, հարցաւորման համար կը տրամադրէ որ ժողովին հարցուի թէ կուզէ՞ լսել թէ ոչ, իսկ հարցման համար ստի չը կրնար ըլլալ, և ստոր փորձն այն է որ եթէ Մատթէոս սրբազան փոխանակ ըսելու թէ «այսօր չեմ կրնար պատասխանել» անմիջապէս տար ուղղած պատասխանը. ե՞րբ պիտի հարցունէինք ժողովին թէ կուզէ՞ լսել. պատասխանը լսելէն ետքը: Այսօրուան մեզ ներկայացածն ալ հարցում է և ո՛չ հարցաւորը: Այսինքն եթէ հարցումը հարցաւոր փոխելու ուզեն, այն ատեն ժողովին

պիտի դիմենք հասկընալու համար թէ կը հաճի՞ խնդիր ընել և վիճարանութիւն բանալ հարցման նիւթ եղող առարկային վրայ: այս ըսել է կուզէ՞ լսել հարցաւորման խօսքը:

ՓՈՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Մեր ձեռքի կանոնը այդ տարբերութիւնները որոշած չէ:

ԱՅՅԵԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես ալ այդ պատճառաւ կանոնի բացատրական յօդուածներ առաջարկեցի որ խնդրոյ կարգն է, ժամանակին պիտի որոշենք: Առ այժմ հորի չկայ կարծեմ խնդիրն երկարաձգելու. այսօրուան հարցումն ատենագրութեան մէջ կը գնենք և յառաջիկայ նիստին պատասխանը կը լսենք: Լսելէն ետեւ եթէ խնդիր ընել ուզենք, որ կորուշուի և իր կարգին վիճարանութեան կենթարկուի:

Գանք Երուսաղէմայ վանուց վերաբերեալ Վարչութեան տեղեկագրոյն, որ խնչպէս ըսի՝ հիմա շատ ուշ եկած է, կուզէ՞ որ ատենայ կարգաւոր ատենագրութեան մէջ անցընենք:

ԱԼԱՃԱՋԵԱՆ Զ. ԷՖ. — Կարգացուի, կամ գոնէ համառօտիւ մը նիւթը իմաց տրուի այժմէն, քանզի կարեւորութիւն ունի:

ՋԱՅՆԵՐ. — Ոչ. ատենագրութեան մէջ անցնի և հոն կարգացուի:

Ատենապետ փաշան քուէի դրաւ այս կէտը. և ՈՐՈՇՈՒՆԵՑԱԻ տաանց կարգաւոր ատենագրութեան մէջ անցընել:

Յաջորդ նիստը 15 օրէն գումարել որոշուեցաւ Պիւտճէն Օրտկարգ ունենալով. և ատենը գոցուեցաւ ժամը 10 ին:

Ատենապետ Ատենապետ
Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ Ս. ԱՍԻԱՆԵԱՆ

Վաւմաշուք Ատենապետ փաշա

Աղգային ժողովոյ:

Աղգային Վարչութեան խառն ժողովն Ս. Երուսաղէմայ վանուց եւրօական վիճակին նկատմամբ իր օրով հետըզհետէ հասած գրութիւններն ուշադրութեան առնելով, այս հռչակաւոր վանքն ծանր պարտուց ենթարկուելու պատճառներն միառ մի քննած ատեն տեսաւ որ 1864 թուականին Ամեն. Տ. Եսայի Սրբազան՝ Պատրիարք ընտրուելէ և վանուց համար յատուկ կանոնագիր մը պատրաստուելէ ետեւ՝ անմիջապէս կանոնագրութեան 36-րդ յօդուածին հակառակ նորընտիր Պատրիարքն 300 հազար դրչի փոխառութեան մ'արտօնութիւն խնդրած է՝ վանքին ձմեռուան պարէնը պատրաստելու համար:

1865 ի Վարչական ժողովն ցաւ ըզգալով որ այսպիսի գրամական խնդիր մը կը ներկայանայ իր առջև Վանքին ներքին ելեւմտից և եկամտից վիճակը չներկայացած, որոշած է Վանքին հաշիւը և ելեւմտից վիճակը ստանալ և այնուհետեւ իւր առաջարկութիւնը նկատողութեան առնուլ:

1865 դեկտ. 3 ին Երուսաղէմայ Ս. Պատրիարքէն հասած գրութիւն մը ատենց յիշատակութիւն մ'ընելու հաշուոյ մասին, նոր առաջարկութիւն մը ներկայացուցած է, սակայն Վարչութիւնը որոշած է յիշեցնել կրկին հաշուական խնդիրը և ստիպանք պահանջել զայն:

Ի նիստ 6 նոյմ. 1868 Երուսաղէմայ Ս. Պատրիարքն գրութեամբ մը դարձեալ ատենց պահանջուած հաշուական տեղեկութիւնները տալու կալ-

ուածական խնդիր յուղած էր: Խառն ժողովն որոշած է վերջին ազդու նամակ մ'ալ գրել թէ տարուէ տարի վանուց հաշիւները կեդր. Վարչութեան յուղարկել կը պարտաւորի, մինչդեռ ամենին զրկած չէ և ոչ ալ ցոյց տուած թէ վանքն ի՛նչ կաղութեան մէջ կը գտնուի, որոնք ծանր պատասխանատուութիւն կը հրաւիրեն Ս. Թուոյն վրայ: Եւ յաւելցուցած է թէ ատենց վանուց հաշիւներն ի ձեռին ունենալու կեդր. Վարչութիւնը կարող չէ Վանուց նիւթական խնդիրներու մէջ պէտք եղածն տնօրինել:

Վարչութեան խառն ժողովոյն սոյն որոշում մինչև 1871 տարին անպատասխանի կը մնայ, և այս միջոցին Երուսաղէմայ Ս. Պատրիարքն նոր գրութեամբ մը ծանուցած էր թէ վանքն 17-18 հազար լիւրայի պարտական մընացած է և առաջարկած է որ վանուց սեպհական հեռաւոր տեղեր գտնուած կալուածներն վաճառելով խնչպէս նաև Լէզքսանդրիոյ մէջ գտնուած կալուածներն պայմանաւ մը վարձու տալով ջրնջաւի դիզուած պարտքը, խառն ժողովըն այս կարեւոր առաջարկութեան վրայ անօրէնութիւն մ'ընելէ առաջ իւր որոշումը օրինաւորութեան վրայ հիմնելու համար պէտք կունենայ վանուց հաշիւներն ի ձեռին ունենալ. ուստի գրած է Երուսաղէմայ Ս. Պատրիարքին, որ փոյթ տանի նախորդ Վարչութեանց օրով պահանջուած հաշիւները պատրաստել և ի Պօլիս զրկել:

1872 ապրիլ ամսոյ 25 ին Երուսաղէմայ Պատրիարքութեան Կ. Պօլսոյ Փոխանորդն կեդր. Վարչութեան ներկայանալով յայտնած է թէ Ս. Պատրիար-

քըն գրած է իրեն ապահովութիւն տալ Վարչութեան՝ Աթոռոյն բոլոր հաշիւներուն համար որ յառաջիկայ մայիսէն ետեւ պիտի յուղարկէ :

Ազգ. Վարչութիւնն մինչև 1874 տարին սպասած է խոստացեալ հաշիւներն ստանալու համար, սակայն նոյն տարւոյ յունիսի մէջ հասած գրութիւն մը Աթոռոյն վիճակն ու ներդրութիւնները բացատրել ապահովեցուցած է յատուկ տեղեկագրով մը և 1860էն 1872 տարիներու ելեմտական համարատուութիւնը, որոյ անմիջապէս պատրաստուած և տպագրուած ըլլալը յայտնած է և չէ յուղարկած տեղի ունեցած վարչական փոփոխութիւնները պատճառ բանելով :

Վարչութիւնը փութացեր է պատասխանել թէ վարչական պատճառներն անհետացած են արդէն և այլ ևս յետաձգութեան սուիթ չէ մնացած ուստի հարկադրած է որ ժամ յառաջ յուղարկէ Վանուց հաշիւները : Սոյն պաշտօնագրոյն վրայ ուր ուրեմն 1874 յուլիս ամսոյ վերջերը եղած հասած են տպեալ տեղեկագրով մը (1860—1872) 12 տարուան հաշուեցոյց մը, որ իսկոյն յանձնուած է Վանօրէից խորհրդոյ գիտողութեան : Այս խորհուրդը օգոստ. 23 թուական գիտողագրով մը վերագործուցած ըլլալով Վարչութեան և Վարչութեան Մասնաժողովըն այս ամենն ինկատի առնելով իրօք գիտողութեան արժանի էական կէտեր նշմարած և Աթոռէն բացատրութիւն ստանալու պէտքն յայտնած է : Այս բացատրութիւններն առնուած չեն և 1877ին Ս. Պատրիարքն ծանուցանելով որ դրամական արտաքոյ կարգի ներդու-

թեան պատճառաւ վանուց ուսումնաւորահին առժամանակեայ փակումն որոշուած է, զայն բաց պահելու համար արտաքոյ կարգի կամաւոր օգնութիւն մը հաւաքել խնդրած է : Ամեն. Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հայրն չէ մերժած այս խնդիրն և երևելի ազդայնոց ուղղեալ չըջաբերական մը և ժապաւինեալ տումար մը յանձնած է : Գոլսոյ փոխանորդին : Այս միջոցին Երուսաղէմայ քանչելէրի տրոց առթիւ խընդիր ծագած է և Ելեմտից Հոգաբարձութեան բողոքանայ վրայ գրուած է : Գոլսոյ փոխանորդին որ Աթոռին տարեկան քանչելէրի տուրքը վճարել փութայ : Սակայն Գեր. փոխանորդն պատասխանած է թէ չկրնար երբէք վճարել պահանջուած տուրքն առարկելով որ վանքը մեծ ներդրութեան մէջ կը դրտնուի և մինչև իսկ Միաբանութեան ոգեպահիկ ապրուստը ճարելու ներդրութիւն կը կրէ : Միւս կողմէ Կեդր. Վարչութիւնը լսելով որ Երուսաղէմայ վանքը հետզհետէ տոկոսաւոր պարտուց ծանրութեան տակ ընկճուելու վրայ է, այնպէս որ եթէ կանուխէն դարման չը տարուի, վանքին կործանում կսպառնայ, իրաց այս վիճակին մէջ Ս. Պատրիարքին հետ բանակցելէ առաջ հարկ դատած է նախաքննիչ Մասնաժողով մը կազմել Երուսաղէմէն եկած հին հաշուական թղթերը նկատողութեան առնելու : պարտուց վիճակն ստուգելու և տեղեկագրելու համար :

Յիշեալ Մասնաժողովն 1878 մայիս 19 և 23, յունիս 13 և 20 հետզհետէ չորս նիստ ընելով, վերջին տարիներու հաշուոց ալ գալուն պէտք տեսած և որոյ համար Ս. Պատրիարքին յատուկ գիր

գրել տուած էր. հետեւաբար պարտաւորած էր իւր նիստերը դադարեցնել մինչև որ դան սոյն հաշիւները Երուսաղէմայ Ս. Պատրիարքն վերջին քանի մը տարիներու հաշուոց մասին գրուած նամակին պատասխանելով՝ ծանուցած է թէ, աւոր պատրաստութեանը ձեռնարկած է թէև, սակայն ժամանակի կարօտ է, և պահանջած է որ Աթոռոյն պարտուց վճարման համար անմիջական դարման տարուի : Կ. Պոլսոյ փոխանորդն ալ դրաւոր կարծիք յայտնած է այս մասին՝ առաջարկելով որ նուիրակութեամբ Ազգէն 3 ական դահեկանի կամաւոր հանգանակութիւն մը լինի : Ի վերայ այս ամենայնի Երուսաղէմայ Ս. Պատրիարքն ինիստ 16 յունվար 1879 վերջին ստիպողական նամակ մ'ալ ղրկելով առանց վերջին տարիներու հաշուոց սպասելու անմիջական դարման պահանջած էր պարտուց բարձման մասին :

Կեդր. Վարչութեան խառն ժողովն իրաց այս վիճակին առջև նկատելով որ

1864 թուականէն ի վեր, այսինքն 15 տարի շարունակ Երուսաղիմայ վանուց ներքին և ելեմտական վիճակին վրայ ստեպ տեղեկութիւններ պահանջուած և գոհացուցիչ պատասխան մ'առնուած չէ, և նկատելով մանաւանդ որ վանքն այսօր մեծաքանակ պարտուց տակ ընկճեալ է, այնպէս որ անհնար է տոկալ այլ ևս, ուստի վանքին ելեմտից և ներքին վիճակին տեղեկանալու և ներկայ վտանգաւոր վիճակէն միանգամ ընդ միշտ փրկելու համար երկու երեք քննիչ ղրկել որոշած է. սակայն այս քննչաց համար 200 ոսկւոյ կարօտութիւն մը տեսնելով Կեդր. Վարչութեան Գաղ. ժողովս պարտ ու պատշաճ վարկը խնդրելու համար Պատկ. ժողովոյդ կը դիմէ :

Ի դիմաց Գաղ. ժողովոյ

Առեւտրողիւր

Առեւտրաբետ

Ա. ԱԼԹՈՒՆ ՏԻԻՐԻ

Գ. ՍՏԻՄԱՐԱՃԵԱՆ

19 յունվար 1879

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԳԻՒԱՆՆԻ

Ի ՎԵՐԱՅ ԾՐԱԳՐԻ ՏՐՈՑ ԿԱՆՈՆԱԳՐԻ

Վսեմախոյլ Առնապետ

Աղգային ժողովոյ

Համարակալութեան Գիւանը կը փութայ ըստ խոստման իւրում՝ Վարչութեան Կ. Պոլսոյ համար պատրաստած և Աղգ. ժողովոյ ներկայացուցած տրոյց Կանոնագրին վրայ իր զիտողութիւնները ներկայիւ տեղեկագրել:

Յօդ. Բ.

Սահմանադրութեան 90-րդ յօդուածը պարտք կը դնէ իւրաքանչիւր անհատի տրօր մասնակցիլ ազգային ծախուց: Իսկ 91-րդ յօդուածը ազգային ծախսը երկու տեսակի վերածած է՝ ընդհանուր և մասնաւոր. ընդհանուր ծախսը Կեդրոնական սնտուկին և մասնաւոր ծախսը Թաղական սնտուկներուն վերադրելով: Ուստի և իւրաքանչիւր Հայու պարտք դրած է երկու տեսակ տուրք վճարել Կեդրոնական և Թաղական, մին Կեդրոնական սնտուկին և միւրը իր Թաղին սնտուկին:

Եւ ըստ որում՝ Վարչութիւնը Պատրիարքարանի կողմէն հաւաքուելիք կեդր. տուրքն Թաղական խորհրդոյ գործակցութեամբը հաւաքել կառաջարկէ. ըստ որում Վարչութիւնը Թաղական խորհրդոյ սոյն գործակցութեան փոխարէն հաւաքեալ տրոյց 40 առ 0/0-ը

Թաղական սնտուկներուն թողուլ կառաջարկէ. ըստ որում այս կերպով Թաղական խորհուրդ մը թէ կեդրոնական տուրքն և թէ ի մասնաւորի Թաղական տուրքն հաւաքելու մասին դժուարութեանց կրնայ հանդիպիլ, մասնաւոր ի նկատի ունենալով թէ ցարդ որ և է Թաղական խորհուրդ մը անկարող գտնուած է Թաղական մասնաւոր տուրք հաւաքել. Գիւան ինչպէս Պիւտճիկն նախաքննութեան տեղեկագրովն առաջարկած է, այժմ ևս կառաջարկէ:

Կեդրոնական և Թաղական տուրքերն միացնել. և իւրաքանչիւր անհատի վրայ պարտք դնել իր կարողութեան չափով տարեկան տուրք մը վճարել, որոյ 40 առ 0/0-ը Թաղային և 60 առ 0/0-ը Կեդրոնական տուրք համարիլ:

Ըստ այսմ կառաջարկէ ծրագրին Ա. Յօդուածը բարեփոխել սլոպէս.

«Ամեն ազգային անհատ որ վաստակի և շահու տէր է, պարտական է որոշեալ տարեկան տուրք մը վճարել. որոյ 60 առ 0/0-ը Կեդրոնական և 40 առ 0/0-ը Թաղային տուրք սլոպի համարուի:»

Յօդուած Բ.

1875 Մարտ 21 ի նիստին մէջ Աղգ. ժողովոյ որոշած տրոյց Կանոնագրին ութ աստի-

ճանի վերածած էր Կեդր. տուրքը: 1876 սեպտեմբեր 17 ի նիստին մէջ Աղգ. ժողովը 12 աստիճանի վերածեց տուրքը, նոյն աստեղի վարչութեան առաջարկութեան համաձայն: Աղգի Վարչութիւնը փորձով տեսնելով որ 5, 10, 15, 20 դրուչի փոքրաստիճան քանակութիւններն նշանակութիւն մը չեն ունեցեր և կարծեցեալ արդիւնքը չեն տրտաղրեր, նախկին որոշման վերահաստատութիւնը կը խնդրէ:

Գիւանս կը դիտէ թէ տրոյց մասին ետեւէ ետեւ փոփոխութիւններն ոչ լաւ տպաւորութիւն յառաջ կը բերեն և ոչ լաւ արդիւնք. ուստի առաջարկեալ ներկայ փոփոխութեան ատիթ առնելով, կառաջարկէ աւելի գործնական եղանակ մը, որ միանգամայն Սահմանադրութեան պահանջումն ալ կարենայ դոհացնել, այն է իւրաքանչիւր անհատի կարողութիւնը տրոյց բաշխման հիմք դնել: Չկայ անհատ մը, ըստ ի մտաւորիկ դասէն, որ իր ու իր ընտանեաց ոգեպահիլը ճարելու պարտական չըլլայ. այս աշխատութեան հարկին մէջ այդ անհատը կրնայ տարեկան 20 դրուով իր կրկին տուրքերը վճարել. տարեկան 20 դրուը շարաթական 15 փարս ըսել է, կամ նոյն անհատին երկօրեայ վաստակը. և կարծեմք բարոյական մեծ պարտիք մ'է ամեն Հայու տարեկան 364 աւուրց վաստակին մէջէն դէթ 2 աւուր վաստակը իր կեդրոնական և Թաղային պարտոյց վճարման յատկացնելը:

Ուստի կառաջարկենք

1. Տրոյց փոքրագոյն աստիճանը կամ մէկ բաժինը սահմանել 20 դրու:

2. Իւրաքանչիւր անհատ իր երկօրեայ վաստակին չափ բաժնով պարտական ըլլայ մասնակցիլ ազգային ծախուց, այսինքն՝ տրոյց մէկ բաժինը 20 դրու ըլլալով, իւրաքանչիւր Հայ 2, 3, 4, 5 և ըն բաժնով տրոյց մասնակցիլ:

3. Ամեն անհատ որ տրօր կը մասնակցի ազգային ընդհանուր և մասնաւոր ծախուց, իրաւունք ունենայ ազգային ընդհանուր և մասնաւոր պաշտօնէից ընտրութեան, այն է Երես-

փոխանական և Թաղական պաշտօնէից ընտրութեան:

Գիւանս կը կարծէ թէ այս կերպով Սահմանադրութեան 65-րդ յօդուածին Բ. սրբութեան, այն է 75 դրու վճարողին ընտրողութեան իրաւունց խնդիրն կարելի կըլլայ լուծել, թեթեւ և արդար բարեփոխութեամբ մը:

Այս կերպով մէկ կողմէն երեւոյթական ընտրողութիւնն 20 դրու վճարողաց վրայ ևս տարածիլ կոխի, և անկարողաց ու աղքատաց կրած զրկողութեան խնդիրն ու տրտուջներն ինչին կը բարձուն. միւս կողմէն թաղային ընտրողութեան ալ սահման մը դրուած կըլլայ. զի տուրք տուողն իր ընտրական իրաւունքը պիտի վայելէ:

Ըստ այսմ Գիւանս կառաջարկէ ծրագրին Բ. Յօդուածը բարեփոխել սապէս.

«Տուրքը բաժնի վրայ հիմնեալ է. մէկ բաժինը 20 դրու է. իւրաքանչիւր Հայ պարտական է իր երկօրեայ վաստակին չափով բաժին վճարել, և փոխադարձաբար ընտրական իրաւունքը վայելել»:

Յօդուած Գ.

Եթէ կղերն Աղգին ծառայելուն և Աղգէն ստրկելուն համար աղատ պէտք է ըլլայ տուրք վճարել, ուսուցիչք և դաստիարակք ևս պէտք է աղատ ըլլան այս տուրքէն. ուստի կառաջարկեմք Գ. Յօդուածը փոխել սապէս.

«Այս տուրքը պարտաւորիչ չէ կղերին և ազգային վարժարանաց ուսուցչաց ու դաստիարակաց, որք աւանց վճարման կրնան մասնակցիլ ընտրական իրաւունց և իրենց բաղարական գործոց տնօրէնութիւնը վայելել»:

Այս կերպով Սահմանադրութեան 65-րդ յօդուածին Գ. սրբութեան թեթեւ ու արդար բարեփոխութիւն մը կրած կըլլայ:

Յօդուած Դ.

Ծրագրին 4-րդ յօդուածին մէջ Վարչութիւնը կառաջարկէ որ Թաղական խորհուրդը միայն որոշեն իւրաքանչիւր ազգայնոյ տալիք տրոյց աստիճանը. սակայն Աղգային ժողովն

1875 մարտ 21 ի նիստին մէջ որոշած է որ Թաղական խորհուրդը խորհրդանշաբար անհատի հետ համահանձնութեամբ որոշեն տրոց բանակութիւնը :

Ուստի Ղիւանս ներկայ ծրագրին 4 թղթաւոր 75 մարտ 21 ի որոշման սկզբանց հետ համահանձնեցնելով կառավարիչ :

« Խորհրդանշաբար անհատ ինք կործէ իր տրոց բաժինը համահանձնութեամբ իր Թաղական խորհրդոյն : Եթէ անհատ մը որոշեալ պայմանաւ մէջ իր այս որոշումը յապտէ : Թաղական խորհուրդն կործէ անոր տրոց բաժինը այն տարուան համար » :

Յօդուած Է .

Ծրագրին 5 թղթաւոր թաղերուն բաշխման և հաւաքման գործողութեանց վրայ Վարչութեան հանձնախումբ մանրամասնութեան կը վերաբերի . և ըստ սրտմ Ս. զայն Ժողովն 1876 սեպտեմբեր 17ին Վարչութեան խնդրանոց վրայ որոշած է այդ հանձնարարը իրականացնելու : 1875 մարտ 21 ի օրինաց կապերէն, ուստի այժմ օրինաց կարգը դառնալու պէտք չկայ թէ Վարչութիւնն իր հսկողութիւնն ինչ կերպով պիտի կատարէ : ներկայացուցչով թէ այլ եղանակաւ, հետեւեալ Ղիւանս կառավարիչ :

« Վարչութիւնը կը հսկէ խորհրդանշաբար թաղերու բաշխման և հաւաքման գործողութեանց, և այս մասին հարկ եղած հրահանգները կատարէ » :

Յօդուած Ը .

Ծրագրին 6 թղթաւոր կը ըլլէ . « Զանազան տեղեր վաճառելու ազգային բնակութիւն հաստատած տեղին կը վճարէ իւր տարեկան տուրք » :

Այս յօդուածը եթէ ամսաբանաց գաղտնի ըլլաւ համար գրած է : պէտք էր յաւելու թէ ձմեռային բնակութեան տեղին կը վճարէ իւր տուրք . մտածելով որ տեղի ձմեռային բնակութեան վայրերն են հաստատուած ի Պոլիս

քան թէ ամսաբանաց բնակութեան վայրերն, որ ըստ հաճոյս կը փոփոխին . սակայն ի Պոլիս ձմեռային բնակութեան վայրերն ալ յաճախ փոփոխութեան ենթակայ ընող ազգային կը գտնուին, և այսպիսի բնական է որ վճարման պահուն գտնուած թաղերուն պիտի վճարեն իրենց տուրքը :

Սակայն Ղիւանս կը թուի թէ այդ յօդուածը ստոյգ և ոչ մէկին համար պատրաստուած է . այլ 75 մարտ 21 ի օրինաց 10 թղթաւոր տեղ խորհրդաւոր է : ահա նոյն յօդուածը . « Զանազան տեղեր պանդխտող ազգային ընտանեօք բնակութիւն հաստատած տեղին ազգային անտուկին կը վճարէ իր տարեկան տուրքը » :

Ղիւանս ստուգեց թէ այդ որոշումն անգործադրելի մնացած է ցարդ, և ի Պոլիս պանդխտող ազգային տակաւին գործով ի Պատրիարքարան զիմած տուննին կը վճարեն ազգային Կեդր. տուրքերնին . սակայն փոխարէն ընտրական իրաւունք չեն վայելած ցարդ :

Այդ պանդխտող ազգային ցորչաւ են ի Պոլիս, չեն կրնար իրենց գաւառին ընտրական իրաւունքը վայելել . զի հեռի կը գտնուին իրենց երկրէն . և ոչ ալ պիտի կրնան իրենց տարեկան տրոց պարտքը իրենց գաւառին ազգային անտուկին վճարել . ուստի Ղիւանս կը կարծէ թէ ժամն հասած է այս խնդիրը արդիւնաւոր և նկատելով որ այդ պանդխտող ազգային տարիներով ի Պոլիս բնակելու պարտաւորեալ են, նկատելով որ իրենց հոգեւոր պիտոյնց հետ ազգային պիտոյնին և քաղաքական գործոց անօրէնութիւնն, այն է իւր մտաւորութիւնը և իրենց գտնուած թաղերէն ընդունելով վիճակի մէջ են, նկատելով որ Տէրութիւնն իսկ այս մասին իր Սահմանադրական հրահանգաց մէջ պայման դրած է պանդխտող անձանց բնակական իրաւունք տալ եթէ զէթ մէկ տարիէ ի վեր ի Պոլիս գտնուած ըլլան . Ղիւանս կառավարիչ :

« Եթեւ թէ Վարչութեան առաջարկն իրիւ տեղերը, և թէ ընչէլ 75 մարտ 21 ի օրինաց վերջնական 10 թղթաւոր :

Ղիւանս կը յաւելու թէ ծրագրին Ա. և Բ. յօդուածոց մասին իւր առաջարկած բարեփոխութիւններն այս իմաստով պատրաստեալ են, ծրագրին՝ բնակարիւնը Պոլիս հաստատած պարբերութիւնը վերցնելով : Եւ ստոյգն ըսելու համար մենք ամենքս որ ընտանեօք ի Պոլիս կը բնակիմք՝ ընտանեօք մեր հայրենիքէն պանդխտացեալ կը համարուինք, մինչդեռ մեր միւս եղբարք գէթ առանց ընտանեաց պանդխտացեալ են : Այսպիսի ժամանակի մէջ ոչ միայն չէ արժան խորութիւն ընել, այլ եթէ միութիւնը ոյժ է և դրամը ազգային գործքերն ի դիւրիս հանելու միակ միջոց . մեր պանդխտ կամ ուրիշ բաւական ըսելով՝ գաւառացի եղբարք ոչ մեր միութեանն պէտք է բաժնենք և ոչ առանց դրամական օգնութեանն զրկուինք :

Յօդուած Ի .

Ծրագրին 7 թղթաւոր Վարչութեան հսկողութեան մանրամասնութեանը կը վերաբերի . ուստի Ե. յօդուածով առաջարկեալ բարեփոխութեամբ և մանաւանդ 76 սեպտ. 17 ի որոշմամբ այս յօդուածին տեղի չմնար, ուստի Ղիւանս կառավարիչ :

« Եթեւ այս 7 թղթաւոր » :

Յօդուած Լ .

Ղիւանս նկատողութեան առնելով ծրագրին 8 թղթաւոր և 75 մարտ 21 ի օրինաց 5 թղթաւոր, բարեփոխութեամբ կառավարիչ ստալէս :

« Թաղական խորհուրդը կը հաւաքեն տուրք : Տարեկան տուրքն երկու անգամով կը վճարուի, վեց ամիսն անգամ մը ի 1 մայիսի և ի 1 նոյեմբերի, ուղղուն ազատ է անմիջապէս մէկ անգամէն ալ վճարել ամբողջ տարեկանը » :

Յօդուած Թ .

Ծրագրին 9 թղթաւոր նոյնութեամբ ընդունիլ կառավարիչ :

« Տարբը վճարող ազգայինը Թաղական խորհրդոյն միջոցաւ ընկալագիր կստանայ, կներեալ ի Տնտեսական խորհրդոյ և յԵլեմից հոգարարձութենէ » :

Յօդուած Ժ .

Ծրագրին 10 թղթաւոր հաւաքման գործողութեան մանրամասնութեան կը վերաբերի . ուստի իրիւ Վարչական հրահանգաց վերաբերեալ կէտ, և համաձայն 76 սեպտեմբեր 17 ի որոշման կառավարիչ :

« Եթեւ ծրագրին 10 թղթաւոր » :

Յօդուած ԺԱ .

Ծրագրին 11 թղթաւոր որոշեալ ժամանակին մէջ իրենց տուրքը չվճարող ազգայնոց վրայ տուգանք դնելու խնդիրն է, և Ղիւանս 1875 մարտի օրինաց վիճարանութիւններն նկատողութեան առնելով, նոյն օրինաց 6 թղթաւոր կրկին Ս. զայն ժողովոյ ընդունելութեան կենթարկէ, որ է այս :

« Բաղարական գործոց մը համար Պատրիարքարան կամ Թաղական խորհուրդներուն զիմող ազգայինէ մը տարին լրացած և երեք անգամ ուղղած բաց տակաւին անվճար ձեռք ուսած ու դիզուած տուրքերը պիտի առնուին, և ետքը նոյն անձին գործը պիտի տեսնուի » :

Յօդուած ԺԲ .

Ծրագրին 12 թղթաւոր հետեւեալ բարեփոխութեամբ կը ներկայեմք :

« Թաղական խորհուրդը Թաղական սրնառակին հաշույն կանցնեն իրենց ձեռք հաւաքեալ ազգային տրոց 40 առ 0/0 ը իրիւ թաղային տուրք » :

Յօդուած ԺԳ .

Ծրագրին 13 թղթաւոր բարեփոխութեամբ կառավարիչ ստալէս :

« Թաղական խորհուրդը կընեն ազգային տրոց բաշխման և հաւաքման համար պէտք է

զած ծախքերը, որ առ առաւելն հաւարեալ գումարին 10 առ 0/0 կրնայ ըլլալ :

Յօդուած ԺԳ.

Ծրագրին 14րդ 15րդ և 16րդ յօդուածները որ հաւարման, գանձման և կեդրոնական սնտուկին վճարման մանրամասնութիւնք են, իրրեւ Վարչական հրահանգի վերաբերեալ կէտ, և համաձայն 76 սեպտ. 17 ի որոշման կառաջարկեմք :

« Մերժել 14րդ, 15րդ և 16րդ յօդուածները » :

Յօդուած ԺԵ.

Ծրագրին 17րդ յօդուածը հետեւեալ բարեփոխութեամբ կառաջարկեմք

« Ամեն տարեգլխէ երեք ամիս յառաջ, այն է Փետրվար ամսոյ մէջ Թագ. Խորհուրդը կը բնեն ու կընշանակեն թաղեցւոյ աստիճանաց վերին ու ստորին փոփոխութիւնները, և թաղեցւոյ մէջէն բնակութեան փոփոխութեամբ և կամ մահուամբ օրակսածները, նորածինները, նորեկները ու տուրքի նոր մասնակցողները, ըստ այնմ կարճաճաճքեն ու Պատրիարքարանի կը հաղորդեն :

Յօդուած ԺԶ.

Ծրագրին 18րդ յօդուածն արդէն 5րդ յօդուածին հետ առաջարկած ըլլալով, զայն աւելորդ կը դատուի :

30 Յունիս 1879

ՏԵՂԵԿԱՅԵՐ

Յ. ԱՐՇԱԿ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԿՐԾՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Տ. Մկրտիչ	Ս. Արքեպ. Խորխան	Ա. Առնապետ
2	Տ. Խորէն	Ս. " Նարպէյ	
3	Տ. Կարապետ	Ս. Եղս. Սերովբեան	
4	Տ. Մատթէոս	Ս. " Իզմիրեան	Բ. Առնապետ
5	Տ. Ամբասիս	Ծ. Վրդ. Ռուբինեան	
6	Տ. Ղարեգին	Ծ. " Թաթարեան	
7	Տ. Եղիշիկ	Ծ. " Աստուծի (Առաջն. սրբաօնի զուրա դպցած)	
8	Տ. Իզնատիոս	Ծ. " Շիշմեան	
9	Տ. Հմայեակ	Ծ. " Ղլմարսեան	
10	Տ. Ներսէս	Ծ. " Ասլանեան	
11	Տ. Պօղոս	Ծ. " Խօլտամեան	
12	Տ. Արթուրակէս	Աւագ Քչն. Մամբրեան	
13	Տ. Խորէն	" Փէլլիվանեան	Բ. Առնապետ
14	Սահակ	" Տ. Սարգսեան	Ա. Առնապետ

ԲԱՂԱԲԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Առաքել	Էփէնտի Աթմէ Տիւրքի	Ա. Առնապետ
2	Գէորգ	" Աթմարանեան	Ա. Առնապետ
3	Գէորգ	" Գլլըճճեան	
4	Կարապետ	" Հաղարեան	
5	Լօգոֆիթ	" Պաղօղեան	
6	Մատթէոս	" Ալիսանեան	Բ. Առնապետ (Հրաժարեալ)
7	Մարտիրոս	" Միւհէնտիսեան	
8	Մկրտիչ	" Յիշիկեան	
9	Յակոբ	" Զօսմանեան	
10	Յարութիւն	" Սահակեան	
11	Սահակ	" Ղարաբաղեան	
12	Սենեքերիմ	" Մանուկեան	
13	Ստեփան	" Պէլլիվանեան	Բ. Առնապետ
14	Տիգրա	" Բարաքամեան	

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԽԱԽՈՒՅ ՅԱՏԿԱՅԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի, և Ղալաթիոյ
Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ բանկայը և Հայ գրաւմանաւաց քով: